Զնոյն պատուիրէ զգուշութ եւ սբն Ներսէս շնորհալին ՚ի բանն, որ առ քահանայս. մի՛ ոք ասէ անարժանութ ածային խորհրդոյն սպասաւորեսցէ. կամ զոք ՚ի ժողովրդենէ անքննաբար հաղորդեցուսցէ. զի մի՛ ընդ յուդայի եւ ընդ խաչահանուացն դատապարտեսցի :

Եւ գրիգոր հայրապետն հռովմայ՝ ոչ կարծեմ ասէ ե՛ղբարք սիրելիք. թէ կրեսցէ քս զայնպիսի անարգանս եւ զայնքան զըպարտութիւնս յայլ մարդկանէ, որպէս կրէ ՚ի քահանայից, յորժամ տեսցէ զնոսա, որք յօրինակ եւ յուղ-

ղու

ղութիւն այլոց 'ի նմանէ կարգեցան, օրինակ լծիւրութե և սատանդանութե զինքեանս կացուցանիցեն: Այլ և յորժամ տեսցէ, զի մեղանչեմք, որք զամ մեղս սանձել և արմատախիլ առնել պարտաւորեցաք:

## Գլուխ տասներորդ:

### Թէ ընդէ՞ր անաչառ պատժէ Այ զքահանայս վս մեղաց:

Սրանց ակնառու է արդ՝ որև վրէժխնդրութիւն դատաստանին այ 'ի վերայ մեղուցեալ քահանայից, և համակ աններելի վասն ծանրութեանն. որպէս և ասէ 'ի ձեռն ովսեայ մարգարէի, գ՛. 7: ըստ բազմութե իւրեանց, նոյնպէս և մեղան ինձ՝ զփառս նց յանարգութի հասուցից: Զմեղս ժողովրդեան իմոյ կերիցեն, և անիրաւութեք իւրեանց առցեն զանձինս իւրեանց: Այլ և եղիցի որպէս ժողովուրդն, նոյնպս և քահանայն. և խնդրեցից զվրէժ 'ի նմանէ, և ըստ ճանապարհաց նորա, և ըստ խորհրդոց նր հատուցից նմա. և այլն: Այլ է՛ր աղագասաստիկ և անաչառ վրէժխնդրութբ 'ի պատիժ բերէ քահանային նա ինքն ամենաբարի բնութիւնն վասն զի զձեզ (այ է զքահանայսդ) ասէ ծանեայ յամենայն ազգաց երկրի. յայն սակըս այց արարից ձեզ 'ի վերայ անօրէնութեց ձերոց: իբրու Թէ՝ սաստկութն քննեցից, և անաչառապէս պատժեցից: Զսոյն և յերկրորդօրինաց, իը. 63. սպառնայ յասելն: Որպէս ուրախ եղև 'ի ձեզ տր բարի առնել ձեզ, և բազմացուցանել զձեզ, նոյնպէս ուրախ լինիցի տր 'ի ձեզ 'ի սատակել զձեզ. և ցրուեսցէ զքեզ տր այծ քոյ: Այլ յիրաւի՝ զի եԹէ յա-

տուկ

տուեալ իմն պատուով պատուեցան ՚ի տեառնէ, ապա և յառաջագոյն ևս վրէժխնդրութբ պատժին ՚ի չպահելն զպատուիրանս նց, և չարաչար գործովք ՚ի բարձրացուցանելն զնա։ Ա՟ այսպիսի քահանայից ասացեալ է ՚ի սաղմոսի. Եղիցին սեղանք նց առաջի նց յորոգայթ։ Ա՟ զի՝ ոչ միայն վշտացուցիչ է նց յանցանք քահանայից, այլ և կարի դժուարաւ մոռանայ զայն ԱԾ։

Քանզի այն՝ որ փրկութբ մարդկան պարարի, որ վն դարձման միոյ մեղաւորի ուրախութի առնէ հրեշտակաց յերկինս, որ զպոռնիկսն և բղջրկօղս երկնից արքայութն ժառանգորդս արար, երդնու վն մեղաց հեղեայ, և ասէ տր Թագաւորութն. Գ՟. 14։ Երդուայ տանն հեղեայ, թէ ոչ քաւեսցի անօրէնութի տանն հեղեայ խնկովք և զոհիւք մինչև ՚ի յաւիտեան։ Զարհուրելի և կարի ահագին այս սպառնալիք։

Ոչ ապաքէն թեթևագոյն իմն էր մեղքն ոզիայ, այլ սակայն տե՛ս՝ թէ ո՞րքան խստագոյնս պատժեաց ած վն յանդգնութե իւրոյ ՚ի տապանակն. ա. Մնացորդաց ժգ. 10։ Նա բարկացաւ տր սրտմտութբ ՚ի վերայ ոզայ, և եհար զնա անդ յաղագս ձգելոյ նր զձեռն իւր ՚ի տապանակն, և մեռաւ անդ առաջի այ։ Ո՜րչ ահաւոր և սարսափելի դատաստանաց այ. ո՞ ոչ երկիցէ ՚ի քէն Թագաւոր ազգաց, ասէ Երեմիա. Ժ. 7։ Դողան ապաքէն ամ ազգ և ազինք։

Մի՛ յուսար ապա ո՛վ քահանայ անմաքուր՝ մի՛ յուսար երբէք, թէ ապաւորութի քոյ սրբութեան

թեան սեղանոյն, 'ի վիճակ տան ա՟յ ընտրութ՟ե որոշումնրդ, և ն. կարիցեն օգնութ՟ ինչ մատու-ցանել փրկու՟թ անձինդ, այլ մանաւանդ զա-ղէտս դատապարտու՟թ քոյ սաստկացուցանեն:

Տե՛ս՝ զի՛նչ ասէ երեմ, ժ՟ա. 15: Մի՞ թէ աղօթք քո և միս նուիրեալ անցուցանիցե՞ն 'ի քէն զչարիս քո. կամ թէ այսպիսեօք ապրեսցի՞ս, ոչ երբէք. այլ՝ անտարակոյս 'ի դատապարտու-թիւն անձին ուտես, եթէ ոչ խորհեսցես զմար-մին տեառն՝ ըստ պօղոսի: Նու չխորհելն այնէ, զի իբրև 'ի հասարակ կերակուր մեղաւմած հօգւով մերձենաս, և զանքարկանալին բր-նուլ 'ի ցասումն բերես 'ի վ՟ր քոյ և 'ի վերայ ա՟մ աշխարհի:

Այս և այլ ինչ աստանօր մեզ ածել զմտաւ, ով դասք քահանայից՝ զի անօրէնութ՟ի յանցա-նաց մերոց և ստո իսկ յաշխարհի ռամկօք առ-նէ զմեզ աշխարհականաց, և զսրբազան կարգի մեր պատիւ յանարգութ՟ե աղէտս կործանէ. և ընդ ծանրաբեռն հարկօք առաջնորդացն տագ-նապէ և նեղէ, որ առ հաւատչեայ են յաւիտե-նական անարգութ՟ե մերոյ: Վասնզի ցուցեալ ա՟յ զա՟մ պղծութ՟իս չարեաց հետագայ քահանայիցն առ մարգարէն եզեկիէլ, ասէ սպառնալեօք. ի՟բ. 18. և ես արարից ընդ նո՟ցա բարկութ՟ե, և ոչ խնայեսցէ ակն իմ, և ոչ ողորմեցայց նո՟ց, և ա-ղաղակեսցեն յականջս իմ մեծաձայնս՝ և ոչ լուայց նո՟ց: Այլ 'ի ձեռն մաղաքիայ մարգարէի յայտնագոյն ևս ասէ. ի՟բ. 1. Այս պատուէր է իմ առ ձեզ՝ քահանայք, եթէ ոչ լսիցէք, և ոչ դնիցէք 'ի սրտի տալ փառս անուան իմում

ասէ

ասէ տ̄ր ամենակալ, առաքեցից 'ի վերայ ձեր անէծս. և այլն: Նաև ապա ասէ. ես ետու զձեզ արհամարհելս և լքեալս ը̄ ա̄մ ազգս, փոխանակ զի ոչ պահեցէք զճանապարհս իմ, այլ ակնառ-նուիք օրինօք: Արդ արդ դատաստանաւ, զի՛ որք ոչ ծանեաք զբարձրութի̄ն շնորհին մեզ պարգևե-լոյ, պատժիմք նա և աստ 'ի յայս կեանս չճա-նաչելոյն աշխարհականաց զպատիւ մեր: Զի՛ աղին անհամեցելոյ արտաքս ընկենուլ և կո-խան 'ի մարդկանէ լինել՝ վճռեցաւ յօրհնաբա-նե̄լն բերանոյ յաւիտենական ճշմարտութե̄: Արդ՝ զի՞նչ արասցուք ե՛ղբարք, զի՞ լիցի մեզ ազատութի̄ յայսպիսեաց դառն վտանգէց. պա-հեսցեն զպատուիրանս իմ ասէ ա̄ծ 'ի գիրս ղևտացւոց, զի մի՛ անկցին 'ի մեղս, և մեռցին 'ի սրբութե̄ անդ: Նաև պատուիրանքն ա̄յ անստգ-տանելի վարք մեր են և սէր:

Ընտիր ոմն էր ահարոն, ա̄ծախօս էր՝ մովսէս, այլ տե՛ս ինձ դու՝ վ̄ս զի երկմտեցան 'ի հա-ւատոց 'ի հարկանելն զվէմն փառաւորանաւ, պատ-ժեաց ա̄ծ չմտանել յերկիրն աւետեաց. թէ-պէտ և յաչս ն̄ց թեթև ինչ թուիւր այն մեղք: որդիք ահարոնի էին նաբաթ և աբիուդ, և քահանայապետք, և վ̄ս զի՛ ընդ ձեռնադրիլն իւրեանց, հուր օտար եդին 'ի բուրվառս՝ զոր ոչ էր կարգեալ ա̄ծ. յանկարծահաս մահուամբ սատակեցան: Զի՞նչ ինչ ապա ոչ անցցեն ընդ նորոյ կտակի քահանայս պատիժք պատուհասից, որք զա̄ծային զհուրն վառեն զո̄րն ք̄ս. կամ որք զվավաշոտ բղջախոհութե̄ զհուրն պղծալի բուրվառաւ մարմնոյ և մտաց 'ի սեղան տեառն մատուցանեն յանդուգն չարութե̄. ողորմելի՛ է

այս

այս կուրութ̅ մնաց, ողորմելի՛ և ամենաթշուառ. և մեք կամաւ համբուրեմք անզգայապէս: Այլ զի մի՛ պակասեսցին և ՚ի նորոց աստի օրինակք, լուեալ էք այսպէս զաններելի դատաստան պատժոյ ուստոնին. հմուտ էք, թէ զի՞արդ հերձեալ ընդ մէջ՝ արտաքս հեղաւ փոր յուդայի՛ յաւէտ վ̅ն անարժան հաղորդութ̅ե ՚ի մարմնոյ տ̅ն. և ընթերցեալ էք զբազմաց յանցաւոր քահանայից զարագահաս զպատիժ: Նա՝ սքանչելագործ ամն էր հրեշտակն եփեսացւոց, մինչև զմեռեալս անգամ յարուցանել. որում և տ̅ծ վկայէ. յայտն'' բ̅. 2: Գիտեմ ասէ զգործս քո և զվաստակս քո, և զհամբերութ̅ի․․․. և համբերեցեր և վշտացար վ̅ն անուան իմոյ և աշխատեցար. և այլն: Այլ զի ոչ ՚ի ջանս բերիւր բառնալ ՚ի միջոյ զչարութիւն նիկողայոսի, տե՛ս զի՞նչ սպառնայ նմա: Բայց ես ասէ վաղվաղակի, և շարժեցից զաշտանակս քո (որք են եկեղեցիք) ՚ի տեղւոջէ իւրմէ, եթէ ոչ ապաշխարեսցես: Նմպիսւոյն ահա այսպիսի սաստ ըսպառնալեաց. իսկ մեզ զի՞նչ. մերժեցի զքեզ, զի մի՛ ես քահանայանայցես ինձ: Ա̅ս այնորիկ փոյթ կալցուք արիանալ ՚ի պաշտման մերում. ջանասցուք զաղտեղութ̅ի հանդերձից մերոց ապիտակացուցանել՝ լուացմամբ ՚ի ջուր արտասուաց. դիցուք դեղ յաչս մեր՝ զուղղահայեցութ̅ե զբարեզարդ ձիրան մեծարելով. ո՞վ զի հաճոյական ընդունելութ̅ե տ̅ն արժանի գրոցուք, որ միշտ առ դուրս կայ և բաղխէ:

՚Ի յայտնութ̅ին սրբուհոյն Վրիկիդեայ (որ կոյս ոմն է յազգի Փռանկաց) յաճախագոյն գանկատի տ̅ծ վ̅ն անօրէնութեցն քահանայից. և առ ՚ի ցուցանել զծանրութ̅ի մեղաց նց՝ քան

զա̅մ

զմի՛մ հրէայս և զհեթանոսս, և քան զմի՛մ մե֊ ղաւորս վաղթարագոյն անուանէ զնոսին, ասե֊ լով. կարի յոյժ սաստկագոյն պատիժ դժոխոց պահեալ կայ նց, քան յուդայի: Եւ այլ ու֊ րեք կարի սարսափելի անիծիւք լնու զնոսա. և ապա սկսանի անիծանել զոր ինչ ունեն, կամ ըմպեն, և կամ շօշափեն: Անիծանէ և զաւուր֊ սըն, որք սնուանդս տան այնպիսեաց: Եւ այս յայտնութիւք քննութե՟ ընկալեալ են յեկեղեցիս լատինացւոց. ո՛չ ապաքէն յաղագս այսպիսի քահանայից գրեալ է և այն, զոր ասէ մովսէս. Բ. օրէն. իը. 22: Հարցէ՛ զքեզ տէր տարակու֊ սանօք, և ջերմամբ, և սարսռով, և խեթիւք, և երկիւղիւ, և խորշակաւ, և գունով, և հա֊ լածեսցեն զքեզ մինչև կորուսցեն, եւն:

Բայց եթէ քննեսցի պատճառն, թէ առ ի՞մէ սաստկագոյն պատիժ քահանայից, քան զաշխար֊ հականաց. յայտնի՛ է ահա և դիւրիմաց. զի ո՛չ միայն ՚ի ձեռն անուղղայ վարուց և գնացից կորստեան իւրեանց լինին պատճառ, այլ և բազմաց իսկ ժողովրդոց. որք արե՟մբն քնի ա֊ զատեալք յորբանեկուէ չարին՝ յանձնեցան ՚ի խնամս հովուութե՟նցս. որով և վէմ գայթակ֊ ղութե և պատճառ մեղաց ժողովրդեան եղե՟լ ունայնացուցանեն զարդիւնս չարչարանաց և խաչի տեառն քնի: Ողբա՛ են, որք ըստ սրբազա֊ նին պետրոսի՝ սպրդեալ մուծանեն հերձուա֊ ծըս կորստեան. և զորս տէրն գնեաց, զնոսա ուրացեալ՝ ածեն ՚ի վերայ անձանց զարագա֊ հասն կորուստ: Բ. պետ՟. Բ. 1: Ողբա՛ են, որք ՚ի մեհենի չարութե՟ բազմեալ շուայտին ՚ի մեղս ըստ պօղոսի, և չար օրինակաւ իւրեանց կորու֊ սանեն

սանեն զտկար եղբայրն, վասն որոյ Քրիստոս մեռաւ ։
Ա. Կորնթ''. Ը. 10 ։ Ապա այնորիկ և իրաւապէս
բազմապատիկ պատժովք լուծանեն զվրէժ ։
Զի եթէ երիցունք՝ որք բարուքն պաշտիցեն,
կրկին պատուոյ արժանան, ապա և որք ՚ի կո-
րուստ հօտին անկարգանան, նմանապէս սաստ-
կագոյն քան զամենայն ՚ի պատիժ մատնին ։

Տե՛ս զինչ ասէ սուրբն Յովհան Ոսկե''. եթէ քա-
հանայք ՚ի մեղս լինիցին, ամենայն ժողովուրդք ՚ի
նոյն յօժարեալ մեղանչեն անխիղճ. յաղագս ո-
րոյ պատասխանի տալ պարտաւորին ոչ միայն
վասն մեղաց իւրեանց, այլև վասն մեղաց ա-
մենեցուն ։ Եւ դարձեալ ասէ. ո՛չ ՚ի տաճարէ
ելանեն ամենայն բարիք, նոյնպէս և ՚ի տաճարէ
բղխեն ամենայն չարիք ։ Յորժամ տեսցես զժողո-
վուրդն անխրատութեամբ և անզգամութեամբ վարակեալ
ծանի՛ր՝ թէ ՚ի քահանայս տարրացեալ և հաս-
տատեալ են մեղք ։

Զսոյն զայս և Գրիգոր հայրապետն Հռովմայ
վկայէ. Մեռումն ասէ և կործանումն ժողո-
վրդեան մանաւանդ վասն մեղաց քահանայից լի-
ցի ։ Եւ այլուր ասէ. Տեսանէ՛ք արդեօք,
զաշխարհ, թէ ո՛րքան սրախողխող մեռանի, տե-
սանէք զժողովուրդն, թէ ո՛րպիսի պատժովք պա-
տուհասիցն մերտ չարչարի. հայեցարուք՝ ո՛յր աղա-
գաւ գործին այսորիկ, եթէ ոչ վասն մեղաց քա-
հանայից ։ Զի մեք եմք պատճառ մահուան
ժողովրդեան, որով կորնչին. մեզ պարտ էր ա-
ռաջնորդել նմա ՚ի կեանս. բայց սակայն յաղա-
գս մեղաց մերոց ժողովուրդք գունդագունդ
տանկան. զի վասն մերոյ պղերգութեան չեն կրթեալք
՚ի կեանս ։

Սու բեռնարտոս ասէ. Թշուառական կենցաղ քահանայից՝ աւաղական և ողբալի կործանումն եղև տէրունի ժողովրդեանն մյ:

Սու օգոստինոս ասէ. Հանդերձեալ է օր դա-տաստանի վն քահանայից, յորոց պահանջին ամ հոգիք: Սու յիրաւի, զի և ած իսկ ասէ, զարիւն ծուլութե քով կորուսելոցն ՚ի ձեռաց քոց խնդրեցից՝ ով կարգեալդ դէտ: Ո՞ ինչ էր պատճառ անհնարին աւերածոյն երուսաղէմի ՚ի քաղդէացւոց, զի՞նչ այլ, բայց եթէ մեղացն յանցմունք քահանայից. որպէս վկայեն մարգա-րէքն երեմիա և եզեկիէլ: Սուտի զայսոսիկ մեր անշուշտ դիտելով՝ զգաստացեալ զարթիցուք ՚ի թմրութէ մեղաց, և ՚ի գործս պաշտաման մերոյ զանստգտանելի և զանբասիր վարս յան-ձին ստասցուք ՚ի շինութի մեր և ամ աշխարհի

Գլուխ Երեսներորդ:

Թէ որչափ պարտաւորութի է քահանայից օրինակ բարեաց լինել ժողովրդեանն:

Այս պարտաւորութի անտի յառաջանայ, զի ինքնակամ յօժարութե առաջի ամ բազմութե յանձնառու եղեն ամ ձգանց և վաստակոց, որք ՚ի բարեկեցութե հօտին քսի վերաբերին: Ուխտեցին հաստատուն դաշամբք արածել զնոյն, և սնուցանել՝ ՚ի փրկաւէտ դարմանս ուղղութե. վստահացան յանձինս կանոն անստեր իւր և անշեղ ցուցանել զինքեանս ՚ի բարե-կարգութի կառավարելոցն: Սնկ և իբրու յատկագոյն կնիք պաշտաման իւրեանց պահանջի զայնպիսի ունել ուղղութի, որով կարիցեն

կա

կ անմնաւորել զժողովուրդն ՚ի վարս, ՚ի բանս
և ՚ի գործս։

Եւ զիա՞րդ առնել պարտ իցէ, ասիցէ ոք
թերևս, ըստ այնմ՝ զոր երջանիկն պետրոս պատ-
մանէ. Արածեցէ՛ք ասէ՝ որ ՚ի ձեզ հօտդ է՝
ա̅յ, վերակացու լինիլ, մի՛ իբրև ակամայ, այլ
կամաւ ըստ ա̅յ. մի՛ զօշաքաղութ̅բ, այլ յօժա-
րութ̅բ. մի՛ իբրև տիրելով վիճակացն, այլ լի-
նել օրինակ հօտին. և այլն։ ա̅ պետր". ե̅. 2։
Արդ՝ եթէ հովիւ քաջ ես և անձնադիր ՚ի բա-
րիս հօտիդ, պարտիս արածել բանիւ խրատու
և յորդորանաց. պարտիս նպաստել աղօթիւք
և օրհնութ̅բ, և պարտիս ուղղաւորել բարե-
կենցաղ գործոց օրինակօք։ Հի՞մ արդեօք
զարմանային ամենեքին ընդ վարդապետութ̅ին
ք̅ի. զի իբրև իշխանութ̅բ ուսուցանէր, և ոչ
որպէս դպիրքն և փարիսեցիքն։

Եւ ո՞չ ապագաւ էր այն վստահութ̅ի յիշխանա-
կան վարդապետութ̅ին. վ̅ն զի՝ չկայր ինչ ստգտա-
նելի ՚ի վարս նորա։ Եւ վ̅ն այնորիկ միայն ըղ-
բանիցն փարիսեցւոց՝ որ համաձայն էր օրինաց,
զկատարումն հրամայէր ունել ժողովրդեան.
և ո՛չ զըստ գործոց ն̅ց նմանակութ̅ի։ Ապա ըղ-
դո՛յշ լեր՝ որ վարդապետ կարգեալ ես խրատու,
զի մի՛ ախտաւոր շարժմունքդ չարութեան տա-
ցեն օրինակ. և զոր միով ձեռամբդ շինել կա-
մ̅իցիս, միւսովդ քակեսցես ՚ի վնաս ժողովրդ̅ն
և ՚ի դատապարտութ̅ի անձին քո, Որկի՛ր յա-
ռակէ երկանին իշոյ, զի մի՛ խորասոյզ ՚ի ծով
անդր դժոխոցն եղեալ՝ անվերջ կապանօք տա-
ռաքարշ շրջանակեսցիս յաղօրիս տանջանաց։
Խրա

ձիրախուսեաց յաւետիս բերկրական վճռոյն. թէ որ արասցէ և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեն երկնից:

Տե՛ս զինչ ասէ հանճարեղն Յուդիթ, ը. 21: ըստ լատին թարգմանութե: Լուքէք քահանայք և երիցունք ի մէջ ժողովրդեն այս. և ի ձէնջ կախին հոգիք նց. ի բարբառ ձեր ուղղեցէ՛ք զսիրտս նց: Եւ սբն պօղոս գրէ առ տիտոս. բ. 7: Ամենեցուն զանձն օրինակ կացուցանել գործոց բարեաց, վարդապետութբ զանեղծութիւն ունել, զսրբութի և զպարկեշտութի. և են: Եւ այլուր ասէ. Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ իբրև զպաշտօնեայս այ, և զհազարապետս խորհրդոցն այ:

Ուստի զայս և այլ ժողովոցն կանոնք վճռեն. զբարի վարս ունել քահանայից, ի հոգս հոտինքն, զինքն օրինակ նց կացուցանել, որպէս և այն որ գրէ: Զի՞նչ այլ ինչ որ այնպէս զմարդիկ կրթեսցէ միշտ ի բարեպաշտութի և ի պաշտօն այ, քան զվարս և զկենցաղավարութիս և զօրինակս այնոցիկ, որք զանձինս իւրեանց ի պաշտօն խորհրդոցն այ կացուցեալ են: Զի ի նոսա իբրև ի հայելի պշնուն աչք այլոց, և ի նոցանէ առնուն զօրինակ հետևողութե: Որոյ աղագաւ այնպէս յարդարել պարտ է քահանայից զվարս իւրեանց և զկենցաղ, որք ի վիճակ տեառն կոչեցեալ են. զի միշտ զծանրակցութի շարժման, զբարեխառնութի բարուց, և զլիակատար իմն կրօնաւորութի հոգւոյ յինքեանս ցուցցեն. ի զգեստս, ի շարժմունս, ի գնացս, ի բանս և յայլ ամ հարկաւոր. և ի բարս ձիրս հոգւոյ:

Դսու

## Գլուխ երկոտասաներորդ :

### Թէ ո՛րչափ հարկաւո՛ր է քահանայից ունել գիտութիւն ։

Որք ՚ի բարձրագոյն խորհրդոցն կարգեալ են ՚ի սպաս պաշտաման, հարկաւոր է նց առաւել զամենակատարն հանճարոյ ունել զգօնութի, որպէս զի մի՛ զեղծումն տգիտաբար ՚ի պաշտօն անդր իւրեանց բերցեն. և փոխանակ վարձուց՝ դատապարտութե լիցին արժանաւորք : Տե՛ս ինձ զսերովբէս. հայեա՛ց խորհրդոյ ակամբք ՚ի բազմաչեայ նոցին լուսափայլութի մտաց և գիտութե, որք վասն զի կարգեալ են զածային նշուլիցն լուսափայլութի հաղորդել ներքին դասակարգութեց, ամենայն ակամբք, ամենատեսք տեսողութե ձրիւք պատշաճեցան : Զնոյն է իմանալ և յաղագս քերովբէից, որք ՚ի յաճախուէ գիտութե ընկալան զանուն :

Զինչ են քահանայք, ո՛չ առաւել սրովբէք երկրաւորք, կարգեալք ՚ի լուսաւորութի ժողովրդեան ըստ ածայնոցն պատուիրանաց. ապա քանի՞ առաւել հարկաւորէ նց ունել ըզգիտութե և զիմաստիցն պայծառութի ՚ի հոգիս իւրեանց. որով կարիցեն բարեպէս առաջնորդել իւրեանց հօտին : Զինչ ասէ մարգարէն մաղաքիայ. Բ. 7: Շրթունք քահանային զգուշասցին գիտութե, և օրէնս խնդրեսցեն ՚ի բերանոյ նր, զի հրեշտակ տեառն ամենակալի է : Ո՛վ դու քահանայ՝ յանձն առեր ուսուցանել տգիտաց, մի՛ հեղգանար ուսանել զկատարելն գիտութի, որով կարասցես զպաշտօնդ փառաւորել : Եթէ տգիտութիք մարմնաւոր բժշկաց մահաբե՛ր են բազում անգամ հիւան-

դաց

դաց , զի՞արդ կարասցես դու ՚ի դատման բը- ժշկութե հոգւոյ առնել , մինչ յորժամ հեղգա- նաս ՚ի կարևորն գիտութե ։ Հրամայէր ած հնոյ կտակին քահանայիցն մի՛ ըմպել նշ զցքի և զգի- նի , որպէս զի ունիցին զգիտութի զատանել ՚ի մէջ սրբոց և պղծոց , պարկեշտից և անպար- կեշտից . ղևտ" . Ժ . 9 ։ Դու զի՞նչ արասցես ար- բեալդ ոչ ՚ի գինւոյ , այլ՝ ՚ի տգիտութէ , որ չա- րագոյն է քան զարբեցութի , զի ՚ի նմանէ յետ սակաւուց լինի զգաստանալ , իսկ ՚ի կամաւոր կուրութե ոչ բնաւ երբէք ։

Լսո՛ւր զի՞նչ ասէ յոհ" ։ ոսկ" . Քահանայքն ոչ միայն զօրէնս գիտել պարտաւորին . այլ և զմս օրինացն պատասխանի տալ ։ Նաև այլուր . Զի՞նչ է սիրտ քահանայից , բայց եթէ տապանակ կտա- կարանաց . յորում վարդապետութիւն ծածկի ը̃ գաւազանին ահարոնին . և տախտակք օրինացն կան ՚ի պահեստ , ևն ։

Սրբազնն պօղոս առ իւրն տիմոթէոս զայն պա- տուէր տայր յեղյեղէ , կրթել զանձն ՚ի կար- և որ գիտութի , ունել զհանճար ՚ի կշտամբութն հակառակացն , հանապազորդել յուսումն սբ գրոց , յորում վարժեալն էր ՚ի մանկութե , ևն . որք զամենայնիւ հարկաւորութի ունել ցու- ցանեն յայնմ քհնյին ։ Այլ վա՛յ մեզ . զի յան- տանելի տգիտութե պաշարեալ տեսանին ար- դէն եկեղեցականք ։ Նաև զմս այնորիկ սպառնայ ած մեզ յիմարելոցս ՚ի ձեռն ովսեայ . Դ . 6 ։ Դու մերժեցեր անդ զգիտութի , մերժեցից և ես զքեզ , զի մի՛ ևս քհնյացցիս ինձ , և մոռա- ցար զօրէնս Աստուծոյ քո , մոռացայց և ես զորդիսն քո ։

Լսեմք

Լսեմք ասէ սբն Ներսէս շնորհալին զոմանց սուտ քհնյից, զի ոչ յայլ ուսմանէ են ոգեա յաղգս հեղգութեն, մանաւանդ թէ վս անհաւատութեն, այլ և զսաղմոսն դաւթի ոչ գիտեն բովանդակ: Նա և սբն Ներսէս լամբրոնացին ողբայ հառաչանօք և յետ բազմաց բանից ըզտունս սրբութե արարաք ասէ վաճառարան. մեք խորշիմք ՚ի նոյն մտանել, և զմանկունս անիմաստս ածեմք ոչ բաշխել մեզ զգիտութի մարմնոյն քի. այլ օտարացն զնոյն վաճառել: Արտասուաց արժանի բանք:

Արդ՝ յիրաւի ոչ այսպէս լինէր, եթէ կուռն ջանիւ փոյթ ունէին եպսկպքն հրամայել որոց յայն պաշտօն ձեռնադրել կամէին. զի զքրիստոնէական վարդապետութին թէ ըստ հաւատոյն մասանց, և թէ ըստ այլոց՝ հրապարակաւ ուսուսցեն և քարոզեսցեն, և չթողացուցանել զնս ՚ի քննութե ձեռնադրութե մտանել. մինչև էին վարժեալք յայտնի և համարձակ ՚ի քրիստոնէական վարդապետութի և ոչ զինեալք հոգևոր կրթութե ՚ի գիտելիս և ՚ի հարկաւոր ծանօթութիս գերագանց այսր պաշտաման:

Փարախս անուն ոմն եպս յափշտակեալ երբեմն ՚ի տեսութի յաւիտենական տանջանացն, ասաց նմա հրեշտակն, ՚ի պղերգութէ վերակացուաց որոյ և ինքն կարգէ գոգցես կորնչիլ համօրէն տիեզերաց: Այս փոյթ կալցուք յուսումն գիտութե. զբօսարան մեզ լիցին մատեանք իմաստից սբց, որով լիցի մեզ ազատութի յանզերծ դատապարտութէ անտի:

Պօլսոյ երեւոյթները:
Ինչ տ՛եսան շաչ բոլոր է անմարտաւոր պղծութ ՚ի տաճարնոյս:

Պարզ և աղտեղի է ապաքէն պղծութ մարմնա-
կան, այլ սակայն ամենաքարշ և առաւել աղ-
տեղի համարի ՚ի քհնյս, և չարագոյն ևս պատ-
ժոց արժանաւոր: Քանզի զի՛նչ այլ ևս աղ-
տեղի տեսիլ, և զի՛նչ այլ չարութ դժնդակ,
յորժամ որք զհրեշտակացն ունիլ զկրթութի
մատուցեալ են զանձինս, յանասնական պղծու-
թիւս վայրենասցին:

Կործանելի էր սոդոմ, սակայն առաւել և
սաստկացաւ պատիժն, և վաղվաղ ՚ի վր եհաս
դատն կատարած. յորժամ ՚ի զուարթունսն
մտաբերեցին գործել զաղտեղիս:

Սոսկացաւ երկինք հարեալ զարշութ, և ըստ
նորատեսիլ նոցայն մծղնէութ զկիզանօղն բղ-
նուճ հրոյ ՚ի կայլակս ջրոյ բանտեալ նորատե-
սակ պատուհասիւ կորոյս զնոսին: Արդ՝ եթէ
այսպիսի դատաստան վրէժխնդրութ եղև ՚ի
վր նց. որք անծանօթ էին օրինաց, և հեռի յաճ-
պաշտութէ: Ո՛ ինչ արդեօք ո՛չ անցցէ ընդ
քհնայս, որք տեղեակք են օրինաց, և հաղորդք
երկնաւոր բարեաց. և քան զպատիւն հրեշտա-
կական դեր ՚ի վերոյ ամբարձեալ՝ ամենասուրբ
խորհրդոցն կարգեալ են սպասաւորք. յորժամ
՚ի պղծութե գարշանման աղտեղասցին: Զե՛ն ար-
ժանի կելոյ, և ո՛չ խոկ զարև տեսանելոյ, կամ
ողորմութե և մարդասիրութե:

Տե՛ս զինչ ասէ Մովսէս ՚ի ղևտաց". իբ. 3: Ամե-
նայն

նայն այր՝ որ մերձենայցէ ՚ի սրբութիւն, զոր սըր- բեցին որդիքն Իսրայէլի տեառն, և պղծութի- իւր ՚ի նմայ՝ սատակեսցի անձն այն յերեսաց ի- մոց։

Ի՞ր արդեօք պատժեալ մահուամբ անկաւ Ոզեայ առաջի տապանակի տեառն, քան եթէ՝ զի ըստ ոմանց վարդապետաց անկեալ էր յայնմ գիշերի ընդ կնոջ իւրում։ Զի՞նչ էր պատ- ճառ որով սատակման որդւոցն հեղեայ, ո՞չ այլ ինչ, քան եթէ զի սակաւ ունէին զողջախոհ- ութի ՚ի պատարագսն հնոյ կտակին, որք միայն ստուերք էին սրբութե մեր պատարագի։

Տե՛ս, զի՞նչ սպառնայ Սրբազանն պօղոս․ ա՛ կորն՛՛․ գ․ 16։ Ո՛չ գիտէք զի տաճար էք այ․ եթէ ոք զտաճար այ ապականէ, ապականեսցէ զնա այ։ Արդ՝ եթէ սոսկ աշխարհականք տաճար են այ, քանի՛ առաւել եւ՛ քահանայք։ Զնոյն ասէ և ՚ի ա․ կորնթ՛՛․ զ․ 15։ Ո՛չ գիտէք, զի մար- մինք ձեր անդամք են քի։ Արդ՝ առեալ զան- դամս քի, առնիցեմ անդամս պոռնկի։

Ընտանելի է այս չարութ վրիժապարտ, և իս- կոյն ՚ի բարկութ շարժէ զամենագութ բարու- թին այ, որպէս և սրբազանն Պօղոս ասէ․ եբր՛՛․ ժա․ 28։ Արհամարհել ուրուք զօրէնսն մով- սէսի՝ առանց իրիք ողորմութե առ երկու կամ երեք վկայիւք մեռանիւր․ իսկ որչափ պատժոց արժանի համարեցիք զայն, որ զորդին այ առ ոտն եհար, և զարիւն նորոյ ուխտի խառնակ հա- մարեցաւ, որով և սրբեցաւն, և զհոգին շնոր- հաց թշնամանեաց։

Ասէ հերոնիմոս ՚ի վր բանին եզեկիէլի․ է․ 26։

Վա

Քահանայք՝ որք անարգեցին զօրէնս, և պղծե-
ցին զսրբութիւնս իմ։ Զմարմինս քո պղծէ, որ ան-
մաքուր մտօք 'ի սեղան գաս պատարագել։

Եւ այլուր ասէ․ Զիա՛րդ կարասցէ տանել
քո շօշափման իւրոյ յանմաքուր ձեռաց, և ճա-
շակման 'ի պղծալից բերանոյ, որ փոքր մի յա-
ռաջ զհամբոյր պոռնկի յինքն տպաւորէր․ այն՝
որ կամեցաւ յամենամաքուր կուսէ ծնանիլ․
և 'ի յերկինս իսկ 'ի դասուց անբիծ կուսա-
նացն շրջապատեալ, ախորժ համօրէն պաշտի 'ի
նոցանէ։

Զնոյն ասէ և սրբն Յովհան ոսկեբեր․ Որք
անմաքուր հոգւով ճաշակեն զմարմին քո՝ զ-
նոյն չարչարանս տան նմա, զոր ետուն բեւեռող-
քըն զնա 'ի խաչին։

Եւ սբ կոյսն Թերեզիա տեսանէր երբեմն, զի
դեւք երկու խեղդէին զոմն քահանայ 'ի սեղան
բեմին, զի պղծութբ շաղախեալ էր։ Եւ իսկա-
պէս անկանէր մեռեալ 'ի բեմէ անտի, եթէ
չէր աղօթեալ սրբուհին այն վս նորա։

Վասն այնորիկ և զծանրագոյն ապաշխարանս
դնեն կանոնք և սբ ժողովք վասն պոռնկութէ
քահանայից․ յորոց մէկն է և այն զոր յառաջ
բերէ կրատիանոս ասելով։ Քահանայ պոռնիկ
զամս տասն ապաշխարհեսցէ ըստ այսմ կարգի։
Զամս երիս չորապահ կացեալ՝ միայն հացիւ
և ջրով շատասցի․ և միշտ քրձազգեցեալ յերկիր
տարածեալ՝ պաղատանօք և արտասուօք թողութիւն
խնդրեսցէ։ Յետոյ զամ մի և կէս 'ի բաց հա-
նեալ զկերակուրս և զաւուրս տօնից՝ յայլ ա-

ւուրսն

ւուրան հացիւ և ջրով միայն կատարեացէ զա-
պաշխարութիւն ։ Եւ անտի մինչև ցամն եօթն
երորդ միայն յերիս աւուրս շաբաթուն ծո-
մապահեացէ լոկ հացիւ և ջրով ։ Իսկ յեօթներ-
որդ ամացն մինչև ՚ի տասներորդն , յաւուր
շաբաթու միայն ծոմապահ ապաշխարեացէ՝ հա-
ցիւ և ջրով և եթ կերակրեալ , մանաւանդ զի
որպէս գրեալ է ՚ի կանոնս , վասն միոյ միայնոյ
պարզ պոռնկութե մշանջենապէս լուծեալ զըր-
կին կղերիկոսք ՚ի կարգէ իւրեանց ։

Ով թէ՝ քանի՛ ահաւոր է անկանել ՚ի ձեռս
այ կենդանւոյ՝ որ ասաց · իմ է վրէժխնդրութի,
և ես հատուցից ։ Եւ մեք անզգայեալ հա-
նումք երբեմն օրինակ ՚ի պատուհաս անտի
յանցաւորացն և զգաստանալ ։ Զի են մասունք
զարհուրելի պատմութե պատժոց, որք պատա-
հեցան մեղաւորաց և անմաքուր հոգւով զք
պատարագողաց, կամ անարժանութե հաղոր-
դելոցն, զորս ընթեռնումք, և ՚ի մեղս մնամք
հաստատուն ։ Ասեմք՝ թէ այժմ հուր ծախիչ է,
և ոչ երկնչիմք ։

Ընթեռնումք զՄովսիսին, թէ քահանայք՝
որք առ տր մատչէին, սրբեսցին · զի մի՛ սատա-
կեսցէ զնս տր, և ոչ պատրաստիմք ։ Մինչև
յերբ յայսպիսի անզգայութե մնասցուք ե՛ղ-
բարք մինչև յերբ յերկիւղէն այ օտարացեալ
անտարբերցուք առահակութե հոգւոյն պատ-
ուիրանաց, մինչև յե՞րբ զկենսատուն հոգւոյ
մեր զընթրիս՝ չարութե մեր գործովք ՚ի հոգե-
կորայս մահացու կերակուր անձանց յեղանա-
կեսցուք ։

Տե՛ս, զինչ ասէ սբն Յովհան ոսկեբերան ։ Ո՛չ
յանդգ

յանդգնաբար ասեմ, այլ որպէս զգամն և 'ի մէր հասեալ եմ, ըստ այնմ մանկաբերիմ: Արդ՝ չկարծեմ, թէ փրկեսցին բազումք 'ի քահանայից և 'ի բաժինան ոյ համարեսցին. զի կարի յոյժ բազում են կորուսեալքն քան զփրկեալսն: Եւ պատճառն է, զի այս պաշտօն ըզգերամբարձ հոգի պահանջէ. ուստի պարտէ նոցա զանձին աչս ունել յամ կողմանց, զի նորագոյն իւրեանց քննութեամբ շուրջ նկատեսցին յամ պարագայս: Եւ պատմէ իսկ, թէ բազում ընդհանուր հիւանդութիւնք և արկածք թշուառութեան եղեն յիւրում ժամանակի յաղագս անարժանութեան հաղորդելոյ: Ուստի և սուրբն կիպրիանոս ասէ, ով եղբարք՝ խորհեսցի այր իւրաքանչիւր՝ ոչ զայն զոր այլ ոք կրեաց, այլ զայն՝ զոր ինքեան կրել արժանէ: Եւ մի՛ հաւատասցէ զինքըն ապատ 'ի պատժոյն լինել, յորժամ առ վայր մի հեռացեալ տեսանէ յինքենէ զիրաւունս դատաստանի: Այս մին և սրբազանն պօղոս գրէ. ա կորն". ը. գ. թէ բազումք 'ի նորահաւատ եկեղեցւոյն յաղագս անարժանս հաղորդելոյն յանկարծական մահուամբ և ընդ երկար հիւանդութեամբ պատժեալ մեռանէին. վասն այնորիկ իսկ են ասէ 'ի ձեզ բազում հիւանդ և ախտաժէտք. և շատք ևս ննջեն, որք և ննջեցեալ իսկ իցեն: Եթէ զանձինս քննէաք, ապա ոչ դատապարտէաք: Արդ՝ եթէ նոքա որք այնչափ զերծեալ էին 'ի կռոցն և նորամուտք 'ի կրօնս սրբութեան, յաղագս չխտրելոյ զմարմին տեառն՝ յայնպիսի վրէժս պահանջեցան, քանի՞ ապա 'ի բիւրապատիկ չարաչար վրէժս կայ մեզ պահանջել, որք յանդստին իսկ յառաջին տիոցն 'ի սրբութեան ուխտն հաստատեալ և քաջազգեց

լեալ

լեալ՝ անարգեմք զհնարհն որբուն, և իբրև զեռոց ՚ի տեղիս մեղաց թաւալեալ, յանդգնիմք անմաքրապէս ստասատորել այնմ, յորմէ և հրըեշտակայինն որբուն զարհուրեալ՝ ՚ի բաց հրաժարի մերձենալ։

## Գլուխ. ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ։

### Իւէ պա՛րտ է քահանայից պահել զողջախոհութ՝ օրինաւո-րկայն։

Ողորմեալ հրեշտակայինն է բարձրուն քահանայական աստիճանի, նոյնպէս և պահանջէունի քհնյից զգերակատարն մաքրութ ՚ի շօշափելիս. և անախտ ամբծութ՝ ՚ի բաց մերժել զմարմնաւորն հեշտութ. քանզի յամենայն որբբութիւն կարգեալ են մատչել, վս այնորիկ և ՚ի ծայրագոյն որբուն զանձինս պահել պարտաւորին։ Մնգժրելի այս ճշմարտութ, և քան զլոյս միջօրէի գերապայծառ, մինչև ՚ի հեթանոսական իսկ ՚ի մոլար միտս զճաճանչ նշուլից իւրոց փայլատակել, որով և քհնյքն՝ որք կարգեալ էին ՚ի պաշտաման սնոտի կռոց. ամ ջանիւ ճգնէին հաստատուն ունել զողջախոհութիւ. և յամ պատճառացն որք վնասել երևէին այնմ մաքրութ, բացէ ՚ի բաց փախուցեալ՝ խոյս զգուշանային։ Ոչ ինչ էին նախընթաց կեանքն կայսրաց վաղերիոսի, բայց եթէ զծոխոյին իմն լուալիք ամ աղտեղի խեներութեց. սակայն յորժամ իբրև գեղ իմն որբագործից տուաւ նմա աստիճան քրմապետութ ողիմպիականն զեւսի, այնուհետև արի առաջադրութ զու գործեաց ջնջել մեղուցանել զեղծ գործոց զպատուոյ իւր փայլին, մինչև ոչ լինել նման նմա յառաջինուն յետ այնորիկ։

Յայս

Զայս կատարելութ̃ վերաբերէր և ջանք քահանայից աթենացւոց · որք համակ հրաժարեալք յամբոխէ՝ և զառանձնական զկեանս ընդգրկեալ, միշտ ՝ի քարանձաւս լերանց և ՝ի յայրս բնակէին · զի մի՛ ցանկութ̃ ինչ աշխարհի ողջախոհութ̃ իւրեանց սասանեսցի ։

«Զի եթէ ընդ պատուհանս կանանց ել մահ, որպէս ասէ Երեմ». Թ, 21 ։ Զի որ այս կարելի է ումեք ՝ի կենդանութ̃ ունել զիւր ողջախոհութ̃, կենցաղականց գոլով ընդ նոսա ։ Այսորիկ փրկաւէտ իմն դեղ է մաքրութ̃ մեկուսի մնալ ՝ի նոցանէ, որքան և կարէ ոք ։

«Նոյնպէս և քրմ̃ք եգիպտացւոց խորշէին խառն ՝ի մայ, ՝ի գինւոյ և յամ պարարտ կերակրոց և յըմպելեաց, և մանաւանդ ՝ի կանանց և ՝ի մերձաւորաց, հանապազ ՝ի մեհենի անդր բնակելով ։ Զհաց և զմիս դուն ուրեմն ուտէին · իսկ զկաթն և զձու ոչ երբէք ։ Զխորշիթս իւրեանց ՝ի տերևոցն արմաւենեաց կազմէին · և զաւուրս երբեմն կամ չորս անճաշակ լինելով, ոսկայլին քաղցու և ծարաւոյ · զի հիւթքն ծնեալք յաւելորդութէ կերակրոց · ճնշեալ ցամաքեսցին · որով և ինքեանց լինիցի համարձակիլ ՝ի պաշտօն իւրեանց և առանց խղճի կատարել զնոյն ։

Արդ՝ չէին ապաքէն սոքա ՝ի կրօնաւորացն Թեբայիդոյ, այլ՝ հեթանոսք և կռոց պաշտօնատարք · և զայսպիսի զգուշութ̃ յանձինս ցուցանէին · և այնքան ջանիւք աշխատէին մեռուցանել զկարիս մարմնոյ ։ Զինչ ապա լինիցի, որ համեմատեալ քրմացն դիւաց՝ վատթարագոյն եւս քան զնո գտանիմք, ողջախոհութ̃ և որկրամոլութ̃

մոլուէ բոլորովին ՚ի մարմին ընկղմեալ։

Տե՛ս, զի՛նչ ասէ սբն Յովհան ոսկե՛՛․ Հարկ է քահանայից քո՛ւ կեալ այնպիսի մաքրութե՛, ո՛չ թէ յերկինս իցեն, և ՚ի մէջ երկնային զօրութեանցն ունին զտեղի։ Ո՛չ է պարտ այլ ինչ իրաց այնպէս մաքրագոյն լինիլ քան զայն, որ զայսպիսի պատարագ վայելէ․ ո՛չ այնքան պայծառագոյն լինիլ պարտէ արեգական, որքան ձեռացն՝ որ զմարմին քո՛ւ և զարիւն շօշափէ․ կամ բերանոյն՝ որ ա՛ծային անմահոյց հրով լնանի․ և կամ լեզուին՝ որ սարսափելի արեամբն քո՛ւ բոսորերանգ կարմրանայ։

Եւ օգոստինոս ասէ․ Ո՛վ քահանայք՝ եթէ իւրաքանչիւր հոգի աթոռ է ա՛յ, առաւելագոյն ևս ձեզ պարտէ լինիլ մաքուր և ամբիծ տաճար և աթոռ այնմ, զոր ճաշակէք․ վասն այնորիկ երկիւղիւ նր՛ սանձեցէ՛ք զմարմինս ձեր․ և բոլորովին ՚ի նոյն բևեռեցէք։

Գլուխ հնգետասաներորդ։

Թէ պարտ է քահանայից հրաժարել յաշխարհական շփոթանաց և յա՛ծայինսն պարապել։

Զբաղմունք կենցաղականք, և հոգք աշխարհայինք փուշ են վնասակար և հեղձուցիչ․ ո՛պ ասէ տէրն մեր յո՛ քո՛․ վ՛ս այնորիկ ամենեցուն իսկ վայե՛լէ ազատ պահել զանձն, և մի՛ իսպառ ընկղմել յայն տարապայման զբաղմանօք․ բայց յաւէտագոյն ևս քահանայից, որ ՚ի վիճակ տե՛ն հրաւիրեցան, որ սեղանոյն ա՛յ սպասաւոր կարգեցան, որ զբանին կերակուր մատակարարել ա՛մ հասակաց տնտես կացուցան, որք յա՛ծային պա

պա

պարապել գործոց կատարումն՝ յայգի եկեղեցւոյ գործել կոչեցան։ Յաղագս որոյ ընդդէմ է ամենեւին եւ դատապարտելի յաշխարհական հոգոցն զբաղմունս անկել գլխովին՝ հեղձուցանել զիւրեանցն պաշտօն 'ի վնաս հասարակաց, եւ 'ի կորուստ հոգւոց իւրեանց յաւիտեան։

Ընթեռնումք զասել սրբազանից առաքելոց. ոչ է հաճոյ մեզ թողուլ զբանն այ՟ եւ պաշտել զսեղանս, եւն՟. գործ". զ՟. 2։ Ապա ընդ ո՛րպիսի դատապարտութե՟ ոչ իցեն, որք զպաշտօն իւրեանց 'ի բաց լքանեն, չարաչար 'ի հոգս կենցաղականացն ընկղմեալք։ Եկեղեցին է գործարան քահանայից. սե՟ գիրքն են նոցուն զբօսարան. քարոզութի՟ բանին է նոցա տուրեւառ. աղօթից պարապումն է այնց զինուորութի՟. եւ մատակարարութի՟ սրբազան խորհրդոցն է պետութի՟ բարձրաստիճան. ապա յայս պարտէ ամ՟ ջանից նց՟ եւ գործոց ուղղակի ձգտիլ, եւ մի՛ յաջ եւ կամ յահեակ բնաւ ստերիւրիլ։ Ուստի եւ գրեալ է 'ի կանոնս առաքելոցն։ Մի՛ երբէք զաշխարհական հոգս յանձն առցեն եպիսկոպոսք կամ քահանայք, կամ սարկաւագունք. ապա թէ ո՛չ՝ լուծցին 'ի կարգէ։ Նա յայլում կանոնի ասեն։ Չէ՛ պարտ եպիսկոպոսի կամ քահանայի կամ սարկաւագի խառնել զինքն 'ի պաշտօն հասարակաց, այլ միայն պարապել 'ի ձեռըն մատուցանել 'ի գործս եկեղեցականս։ Արդ՝ յօժարեսցին հոգւով զայս առնել. ապա թէ ոչ՝ լուծցին. զի ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել։ Նա 'ի ժողովս բազումս նմանապէս արգելմունք եւ կապանք սահմանեցաւ այս. որպէս եւ 'ի ժողովն կարթագինոյ, ուրամեն

սեն · Մի՛ յանձն առնուցուն եպիսկոպոսք կամ քահանայք զխնամածութի՛ւն, զի զհոգս հասարակութեան, և մի՛ զբաղեսցին ՚ի հոգս ատենին, այլ միայն ընթերցման, աղօթից և քարոզութեան բանին պարապեսցին ։

Այնպէս գրէ և կլեմէս պապն հռովմայ · Պա՛րտ է ամ քահանային անարատ լինել · և կուռ ջանիւ գործել, զի զամ զբաղմունս կենցաղականս ՚ի բաց մերժեսցէ յանձնէ, մի՛ լինել երաշխաւոր, մի՛ փաստաբան ՚ի դրունս իշխանաց և յատեանս դատաւորաց աշխարհի · և մի՛ այլ ինչ աշխարհական զբաղմամբ պաշարիլ՝ կենցաղական գործոց պատճառաւ · զի մի՛ գուցէ ՚ի մարդկային հոգս ընկղմելով՝ չկարասցեն ըզպարապումն ունել առ բանն այ ։

Այլ զի բազումք ասեն, թէ այդ կանոն չէ այժմ ՚ի սովորութե · և ոչ իսկ հարկ է մեզ ՚ի գործ դնել զայն, լուիցուք · զի՞նչ ասէ առ այս ժողովն թրեդենդինոյ · որ վերջինն է ամ ժողովոց ։ Կանոնեալ հաստատեաց ասէ ժողովըս զի որ ինչ յառաջին ժողովս փրկաւէտ կանոնիւք սահմանեալ են որք հայրապետաց վս համեստութե կենացն եկեղեցականաց, վս պահելոյ զպաշտօնս իւրեանց և զվարդապետութիւն միանգամայն՝ և վս աւելորդ ուտելեաց և ըմպելեաց, և վասն փախչելոյ և հրաժարելոյ ՚ի խաղուց, ՚ի պարուց · ՚ի չարագործութեց և յաշխարհական գործոց, նոքին և առ յապայ նովին պատժովք կամ ևս աւելի ըստ կանոնաց առաջնորդաց հաստատեսցին և անջրելի պահեսցին ՚ի վս այնոցիկ, որք յանցանիցենն ։ Իսկ եթէ ինչ

ինչ

ինչ 'ի սաՀմանադրութեցն կայսցանէ խափանել իցեն, և ո՛չ պաՀեն, եպիսկոպոսք տեղեացն առանց զանցառութե 'ի սովորութի մուծցեն փաղփաղակի. և մեծաւ ջանիւ Հոգ կալցեն առ 'ի տալ պաՀել ամենեցուն :

Զայսուիկ լսելով ե՛ղբարք՝ թողցուք մեռելոց թաղել զմեռեալս իւրեանց, և մեք զՀեռ ծայնոցն կրթեսցուք պաշտամանց :

Գաբրիէլի չէր յանձն եղեալ Հարկանել՝ այլ պատգամաւոր լինել Հրամանին այ. և վս այնորիկ ո՛չ Համարձակեալ 'ի Հարուած՝ զդեսպանութեն պաշտէր զգործ, ասել ցմիքայէլ, Հա՛ր զդա : Եւ զի՛արդ ապա մեք 'ի պաշտօն փառացն այ վերառեալք, լքցուք զայն 'ի բաց, և ընդ խոցոտիչ զբաղմունս Հոգւոց աշխարՀի շրջանակեսցուք, որ ապականիչն է Հոգւոյն բարելաւութե :

Գիշեր վեշտասաներորդ :

Ուէ պարտաւո՛ր են քահանայք խորհել զանձանց ինչ :

Աղքատութին է մի 'ի գլխաւոր ուխտիցն, զոր պայմանէ ոք անձին, յորժամ 'ի կրօնաւորական կարգն մտանէ. և այնքան Հաճոյ և բարձրագոյն, մինչ 'ի նոյն պարծիլ սրբազնին պետրոսի առաքելոյն մեր. որ ասէ, ահա՛ մեք զամ թողաք և եկաք զկնի քո : Որում պատասխանեաց՝ որ վս մեր էր աղքատացեալ, նստջիք (ընդ այնր) յերկոտասան աթոռ" ևն : մատթ". ժթ. 28 : Զսոյն զայս պարտին ամ քՀնյք Հաստատուն ունել, զի մի ցանկութի ընչիցն ապականեսցէ զխոր-

զխորհուրդս նց̃, և զրկեսցէ յայնպիսի փառա-
ցըն ժառանգութե̃ ։ Վասնզի ասէ սր̃ըն առա-
քեալն պօղոս․ ա̃ տիմօթ․ զ․ 10 ։ Արմատ ա̃մ
չարեաց արծաթսիրութի է․ որում ոմանց ցան-
կացեալ՝ մոլորեցան ՚ի հաւատոց, և զանձինս
արկին ընդ բազում ցաւովք ։ Արդ յիրաւի,
զի չի՛ք և չի՛ք ընաւ իմն այնպիսի ինչ յախտս՝ որ
այնպէս լուծանել զոլոր սիրոյն ա̃յ գիտիցէ ․
որ̃ զագահութի և զարծաթսիրութի․ ո՞չ ապաքէն
նա՛ էր․ որ զտ̃րն երկնի և երկրի էած ՚ի վաճառ։
Նա՛ էր, որ զառաքելըն գերեաց փաղփաղակի, նա
ա̃մ չարեաց և յափշտակութեց և զրկանաց
սկիզբն և արմատ․ ապա սուգի ամենայն մեղք
և չարիք անտի ծնանին ։

Եւզի յա̃մի և առ ա̃մ ազգս՝ որք զսրբոյ ա-
ւետարանին խրատուց երթան զկնի, արգելեալ է
եկեղեցականաց զհետ լինել հարստութե մար-
մնական գոյիւք, վասն այնորիկ և գրէ բեռ-
նարդոս ։ Բաց ՚ի հարկաւոր պիտոյիցն կերա-
կրոյ և հանդերձից՝ զոր ինչ առքեզ ՚ի շահե-
լոցն պահես, այսինքն է՝ ՚ի ստացուածոցն քա-
հանայագործութե̃, չէ քո այն, այլ՝ յափշտա-
կութի և սրբապղծութի ։ Զի ասէ առաքեալն
պօղոս ՚ի տիմ․ զ․ 8 ։ Ունիմք զկերակուր և
զհանդերձս, այնու շատասցուք ։ Տե՛ս և ՚ի մի՛տ
առ ո՛վ պաշտօնեայդ սեղանոյ, զի ո՛չ ասէ այ-
նու զարդարեսցուք, այնու խենեշասցուք, այ-
նու հպարտասցուք, և այլն․ այլ՝ այնու շատաս-
ցուք, զհարկաւորն և եթ ՚ի ծածկոյթ մեր-
կութե մարմնոյ ցուցանելով ։ Արդ դարձեալ ա-
սէ․ վա՛յ քեզ կղե՛րիկոս, որ ուտես զմեղս ժո-
ղովրդեն․ զի լաւ ևս էր քեզ մանաւանդ գոր-
ծել զերկիր, կամ մուրանալ ։ Եկեսցեն եկե-
ղե-

ղեցականք առաջի ատենին քո, և լսելի լիցի յայնժամ ծանրագոյն գանգատ ժողովրդեան և սաստիկ ամբաստանութիւն այնոցիկ, որոց տրովք նման ժառանգաւորք եկեղեցւոյ: Ո՜ ինչ շահ քեզ 'ի հարստութենէ ով անզգամ, որով զայնքան սաստկագոյն դատաստան ունիս տեսանել անձին քում:

Եւ այլուր ասէ. 'ի սեղանոյ անտի կեցցէ կղերիկոս, որում սպասաւորէ: Բայց մի՛ գանձեսցէ յարկեղ. մի՛ վաճառեսցէ յաւելորդս, և մի՛ զազգականս իւր եկեղեցական գոյիւք ճոխացուսցէ: Եւ ես՝ ծանի՛ք (ասէ ով քահանայք) զի 'ի դատաստան ձեր համարին այնոքիկ ամենայն, զոր ընդ վայր 'ի փափկութիւնս ձեր. ծախելով ուտէք:

Սուրբ հերոնիմոս սաստիկ և ծանրագոյն ևս բարբառի: Իբրև 'ի ժանտախտէ փախիր ասէ յայնպիսի կղերիկոսէ, որ յաղքատութենէ հարստացեալ, և յանաւագութենէ ազնուացեալ, 'ի փառս անցաւորացն կայ ընկղմեալ:

Նոյն ասէ և Օգոստինոս. Պարտ է քահանային զաղքատին կեանս ունել. և որ ինչ յաւելու քան զչափաւոր կերակուր և հանդերձ իւր, ոչինչ դանդաղել տալ զայն աղքատաց. զի աղքատաց է այն ամենայն, զոր ունի:

Նոյն և ամենայն ժողովք իսպառ արգելուն, համաձայն սահմանելով, զի եպիսկոպոսք և քահանայք բաւականասցին միայն պարկեշտ զգեստուք, և չափաւոր ուտելեօք և ըմպելեօք,

և

և մի՛ անիրաւեսցին անչափօրէն յինչս կարօտելոց:

Ողորմանալի էր յոյժ անընչաւորութի Միովմայի Հէրլանովայ, յոր վտանգացեալ՝ ՛ի սանձել զընչաքաղց բերութիւն յօժարութե այլոց, ասէր համարձակ. ով եղբարք՝ եթէ ՛ի ժամու մահուանս գտցէ քո՛ն իմ ՛ի սենեկի իմում զեօթն և տասներորդ մասն ինչ միոյ դահեկանի՝ գիտասջիք ստուգիւ, թէ դատապարտեալ է հոգի իմ. և մի՛ թաղէք զիս ՛ի սբ̄ տեղի: Դարձեալ՝ ասէր նոյն եպիսկոպոսն, յորժամ լսեմ, թէ գտեալ է դրամ ՛ի մահուան առ կղերիկոս ոք ունօղ զեկեղեցական հասոյթս, այնքան ցաւագինս տապիմ, որպէս թէ ասէին զնա մեռեալ առ սեղեխի: Ես զի նոյն օրինակ հաւատամ դատապարտիլ այնմ եկեղեցականի, որ գանձէ անձին յընչից եկեղեցւոյ, որպէս այնմ՝ որ կեայ միշտ ընդ պոռնիկս և ընդ շունս: Ես զի համարս պահանջէ տ̄ր ա̄մ բարեաց և գոյից եկեղեցւոյ, եթէ չարաչար վատնեսցեն շռայլ աւելորդութ̄ք:

Սաստիկ են բանքս, և ահաւոր, ե՛ղբարք՝ զոր և մեք մեզէն իսկ գիտեմք, եթէ բարւոք նկատեսցուք: Եկայք ապա ՛ի չափաւորութի բերցուք զշռայլ չարաչար վարուն. բարեզգեաց շնորհափայլութի է մեր հանդերձ զարդու. մի՛ խենեշասցուք ՛ի ցեցահար դիպակս, և մի՛ պատրաստեսցուք զհոգի մեր և զմարմին կերակուր որդանց և ցեցոց: Բանն ա̄յ է մեր կերակուր համադամ, և ուղիղ մատակարարութի պաշտաման մերոյ. զպարկեշտ յարդարուածս մերս սեղանոյ՝

ղանոյ՝ յորում զքո ունիմք սեղանակից, մի՛ դարձուսցուք ՚ի կոչունս հեթանոսաց: Մենապարզ մաքրութե կաթն ոչ ծածանին է մեզ մնդարար հոգւով և մարմնով. մի՛ յօժարեսցուք յարբեցութիւն ՚ի պղտորաջուր գետոյն եգիպտոսի. զի որ զովանալ խնդրէ ՚ի գեհոնէ, պապակեալ տայի ՚ի գեհենի: Նարձումն խաչին քո է մեր կոչմանն նպատակ, մի՛ անկարգասցուք աշտանակել յերկրավայրս և ՚ի կիսէշս զարդարունըս: Ա՜ո զի՝ զիա՛րդ կարասցէ ուղիղ տանել ոք զակօս, յորժամ ՚ի վե՛ր նայել ուղտու մածակալ է. կամ ո՛րպէս ՚ի սեղանոյ տեառն վայելեսցէ, որ խորտկաճաշ յղփութ շռայլ պարարի. կամ զիա՛րդ ՚ի հարսանարան երկնաւոր փեսային մտանել արժանասցի, որ տպականացու զգեստուցն փայլուածով նսեմութ զգեղեցիկ երանգաւ համեստութե համակ արկանէ: Տուշանատիպ է մեր երանգ պայծառութե՝ որով և սողովմոն անգամ չկարաց պաճուճիլ, ՚ի նոյն մնասցուք յաւէտ հաստատուն, զի յերեւիլ տեառն մերոյ արփիակերպ փայլեսցուք յարքայութե երկնից: Նարձրագոյն ևս գերափայլէ շքեղութ մերս վիճակի ՚ի գծուծ խոնարհութե. յայնմ կառուսցուք պարզապէս զբաղձանս պճնասիրութե, որ վայելուչ իմն ՚ի կերպարանս քո զմեզ համակերպեալ՝ անզրաւական նր փառաց ժառանգս կացուցանէ, որ համայն շքեղութց է պանծագոյն:

### Ճառ եօթնեւտասներորդ:

### Թէ զի՛նչ պարտաւորութի է ունողաց եկեղեցական հասոյթից:

Եկեղեցական հասոյթքն են մշտնջենաւոր իրա

րաւունք ինչ, որով առնու ոք զպտուղս յեկեղեցական բարեաց վասն հոգևոր ինչ պաշտաման հաստատելոյ իշխանութեամբն եկեղեցւոյ ։ Նոյնպիսի որոշ սահմանադրութեամբ կարգեալ եկամուտս թէպէտ և ոչ վայելեն այժմեան մերս քահանայք, այլ 'ի կամաւորական նուէրս ժողովրդոց. յորոց իբրու պտուղ ինչ հոգևոր մշակութեան իւրեանց ընկալեալ' 'ի պէտս կեցութեան իւրեանց ընտանեացն մատուցանեն, սակայն գոյ և յայսմ յանցանել, երբեմն ներելի և երբեմն մահուչափ ևս ։ Քանզի արդարև բնական և աստուածային օրէնք են, զի որք խաշնարածք են' 'ի կաթանէ խաշանցն ուտեն ըստ պօղոսի. ա. կորն. թ. 7։ Նա որք 'ի տաճարին գործեն, 'ի տաճարէ անտի ճաշակեն. և պաշտօնեայքն սեղանոյ 'ի սեղանոյ անտի վայելեն. սակայն եթէ ոք 'ի պատճառս շահու և վարձու, կամ վասն պատուոյ և սնափառութեան, և կամ հարստութեան ինչ ախտիւ ագահօրէն տապացել մատչի 'ի սեղան, կամ մուծանէ զանձն 'ի կարգ քահանայութեան, սրբապիղծ է և չար ։ Որքա են ստասիկ. զորս տէրն մեր ոչ հովիւս ոչխարաց, այլ վարձկանս անուանէ ։ Նոյքիկ են, որք անձամբ զանձինս յառաջ մատուցանեն. և ոչ յայլ 'ի նոյն կոչումըն հրաւիրեալ գան ։

Նաև միրատ. քանզի եթէ չկայր նոցա այնպիսի իմն պատճառ յորդորիչ 'ի նոյն, ապաքէն և հայիլ անգամ չկամէին 'ի պաշտօն եկեղեցական յաստուածապաշտիկ իմն ջերմեռանդութենէ, որպէս և տեսանեմք 'ի հասարակի ։ Զինչ վաղճան քահանայութեան կամ այլ եկեղեցական սատիճանաց, բայց եթէ պաշտօն այ, և ըստ ուղղութեան

կառա

կառավարութեան հոգեւորական պաշտամանց: Նուզեա՞րդ ոչ մեղանչեսցէ որ ՚ի կերակուրս եւ ՚ի հանդերձս, ՚ի փառաւորութեան եւ ՚ի շահ անձին դարձուցանէ զքահանայութիւն իւրոյ զաշխարհային իմն գործ կամ արուեստ համարելով:

Մեղանչեն եւս, որք զանգիտն եւ զաստուածային շնորհաց մատակարարութիւն իւրոյ ձրիշտ իմն սակարկութեամբ նուաստացուցանեն, այլքան եւ այնքան խստիւ պահանջելով, եւ ոչ բաւական համարին, զոր ջերմեռանդութիւն ժողովրդոցն ինքնակամ ՚ի պէտս նոցա մատակարարէ: Զի որ ջերմեռանդութեամբ ժողովրդեան յագուրդ կերակրի, յաւետարանէն կեայ, զոր տէրն հրամայեաց. իսկ որ բռնի իմն խստութեամբ ՚ի կեղեքումն բերի, զժողովուրդ տեառն ուտէ ոչ կերակուր հացի, եւ առ տէր ոչ կարդայ: Այլ եւ անդանօր յաւէտ պարտի պահնուլ երկիւղիւ, ուր չհամարի գոլ երկիւղ. անշուշտ գիտասցէ, զի տէր՝ որ է յազգս արդարոց, նոյն ինքն ցրուէ զոսկերս մարդահաճոյից: Մի՛ թիւրեսցէ զնպատակ պաշտաման իւրոյ, մի՛ աղարտեսցէ զվախճանն կոչման, եւ մի՛ չարաչար մոլութեցն եւ անյագ զօշաքաղութեան ախտիւ ապականեսցէ զսրբութիւն իւրաւանց իւրոց. ապա թէ ոչ՝ ՚ի զեղծումն աստուածադիր ուղղութեան բերեալ ամաչէ եւ յամօթ լինի աստ եւ ՚ի հանդերձեալն, զի աստուած անարգէ զնա ըստ դաւթի:

Ապա ջանասցուք եղբարք՝ չբերել յանձինս յայնպիսի արատաւոր յոռութեցն. եւ զոր ինչ ընդունիմք ՚ի կրօնասիրութենէ ժողովրդոցն արդիւնս նուիրաց, պարկեշտութեամբ մատուցուք

ցուք ՚ի համեստ պիտոյս մեր և ընտանեաց մերոց՝ առանց աւելորդ շռայլութեան և կծծի ժլատութեան. զի և այս ՚ի յանցանս է մեզ. զըկել զընտանիս, զի դրամս կուտեսցուք: Արդիւնք մեր եկամտից թէպէտ կաթ առ կաթ թորթորէ, սակայն անընդհատ մշտահոսութեամբ ըստ իւրոյն եղանակի գերազանցէ քան զամենայն շահավաճառութիւն յորձանս հեղեղատիպ շահուց աշխարհի: Զբաղումն պարապոյ մեր միայն աստուածայինքն լիցին, և այլ ամենայն յաւելու մեզ ՚ի յերկնաւորն հօրէ, որ առաւել ևս գիտէ և տայ զմեր կարեացն պիտոյս՝ քան զոր խնդրեմք և իմանամք:

Այս ճառ ըստ սահմանին իւրոյ առաւել ևս եպիսկոպոսաց, կամ այլոց ևս՝ որք մատակարարք են կացեալ արդեանց եկեղեցւոյ, ՚ի դէպ ելանէ. և կամ այնոցիկ՝ որք արդեանցն վանօրէից և այլն՝ կարգին ժողովարար՝ ՚ի դարման աշխարհուրաց աղքատացելոց. թէպէտ և զորինչ ասացաք յաղագս քահանայից սոյդ են ամենևին և անդիմադրելիք: Վասն այնորիկ ամենայն իրօք պարտաւորին եպիսկոպոսք, զի զհաստ եկեղեցւոյ և զեկամուտս նորա ըստ կանոնեալ իրաւանցն պաշտպանել և պահպանել և ըստ հրամանաց իրաւանցն մատակարարել. ապա թէ ոչ ծանունս մեղանչեն: Վասն զի՝ ոչ առաքելական կանոնքն արգելուին, նոյնպէս և սուրբն Սահակ պարթևազնեայ մեր հայրապետ ժողովս գումարեալ ՚ի վաղարշապատ՝ համահաճ հաւանութեամբ ամենեցուն արգել և փակեաց եպիսկոպոսաց՝ զտուրս եկեղեցւոյ ծախելոյ յընդունայնս. կամ տալ ազգականաց, կամ ընծայել իշխանաց առ շնորհս գտանելոյ. ևն: Զի

զտուրս

զտուրս եկեղեցւոյ միայն 'ի պէտս եկեղեցւոյ և եկեղեցականաց որբոց և այրեաց և կարօտելոցն ծախել պարտաւորին. և ոչ յայլ պէտս. նա՝ և ոչ յանկարգ վատնումն 'ի վայելս անձանց։

Նոյն է ասել և վս՟ առաջնորդաց վանաց. որք մահուչափ մեղանչեն եթէ զարդիւնս վանիցն ոչ 'ի պէտս շինուե̅ նորին, կամ 'ի պատշաճաւոր հանդերձս միաբանութե̅ն, այլ յաւելորդ պէտս՝ իւեանց կամ իւրեանցայոց վատնեն չարաչար։ Սոքա են, որք զսեղանս կողոպտեն. որք քարոզեն չգողանալ, գողանան։ Սոքա են, որք ագահութբ̅ մտացածին բանիւք առնեն վտարանդի զմիաբանութի̅ն, որոց դատաստանն 'ի բնէ ոչ դատարկանայ, և կորուստն ոչ նիրհեսցէ. բ̅. պետր. բ̅. 3։ Յայսպիսեաց ապաքէն աղաւաղին կարգք և կանոնք. և յաճախեն 'ի վանականս բազմատեսակ անկարգութի̅ք, շատաշրջիկ թափառիլ յաշխարհի. և առանց պաշտելոյ զկարգն 'ի յոգնազան վատթարութիւս, անկարգանալ 'ի գայթակղութի̅ հասարակ ժողովրդեան։ Նաև որ մեծն է, 'ի յուսահատութե̅ կիբս ըմբռնեալ 'ի թագաւորելոյ ախտին, ըզկարգն անարգեն բազմապատիկ հայհոյութբ̅, ով̅ և տեսեալ եմք բազմիցս։

Սովին պարտաւորին և այնոքիկ, որ մատակարար կարգեալ են արդեանցն և ընչից եկեղեցեաց և վանօրէից, եթէ ոչ ուղիղ մատակարարեսցեն, և առանց ակնառութե̅ կամ շռայլ վատնողութե̅։ Նաև կամ ախորժեսցին ումեմն տալ և զոմն զրկել. և կամ որ 'ի պէտս հասարակութե̅ է կարգեալ, յաւելորդական հաճոյս իւր

իւրեանց վատնել ։ արդ՝ որ և զրկողու՟ն է չարա-
չար, և պարտաւոր առնէ զայնպիսին հասարա-
կացն իրաւանց, ո՟պ և յայտ է ։

Սոյնպէս է և առաւել ևս, յորժամ կար-
գեալքն ՚ի պաշտօն հաւաքելոյ զարդիւնս ե-
կեղեցեաց և վանօրէից՝ գողութբ՟ պահեսցեն
ինչ վ՟ն իւրեանց, զի ճշգրտիւ անօրինելի գո-
ղութի․ զի է արտաքոյ կամաց առաջնորդին և
այլոց վերակացուաց․ յորոց կարգեալ է ապա-
քէն առանձին տուրք տասանորդաց, և կամ այլ
կերպիւ յաղագս այնց՝ փոխանակ աշխատութեան։
Ուստի և որք յայսմ ագահեն, ո՛չ ընդհատ
ինչ գործեն յայնմանէ, զոր անանիա և սափի-
րայ գործեցին, ստելով հոգւոյն սր՟յ ։ Նա՝ մա-
նաւանդ և ծանրագոյն իսկ․ զի նոքա՝ յիւր-
եանց ընչիցն խորեցին, իսկ սոքա զինչս հասա-
րակաց ագահաբար գողանան ։

Բայց պա՛րտ է ամենեցուն յայսպիսեաց զգու-
շանալ, և աչալուրջ պահել ՚ի պաշտաման իւր-
եանց, զի մի անիրաւութե՟ ախտիւ զեղծանի-
ցին, պարտաւորեալ ամենայնիւ ա՟յ և մարդ-
կան ։ Զի՞նչ պատասխանի ընկալաւ պետրոս,
յորժամ եհարց․ ո՞ տ՟ր՝ առ մեզ ասացեր զառա-
կըդ զայդ․ թէ առ ամենեսեան ։ Ո՞վ իցէ հա-
ւատարիմ տնտես և իմաստուն, զոր կացուսցէ
տ՟ր իւր ՚ի վ՟ր գերդաստանի իւրոյ տալ ՚ի ժա-
մու զկերակուրս․ եւ երանի զայնպիսին ։ Իսկ
որ հարկանել զծառայսն, ուտել ըմպել և ըզ-
մատակարարութիւն պաշտաման ուղիղ չտնտեսել
յանդգնեցաւ, զընդ մէջ կտրելն նմա սպառնայ
և զմասն նր՟ ընդ անհաւատսն դնել․ որ կորոյս
զարդա

զարդարութի՟, ժխտեաց իրաւանց, և մերժեաց
զօրէնս այ՟, աշտօն հարկանելով զկանոնս ։

Գտանին բազում վկայութիւք հարցն առաջնոց
՚ի վր այսր նիւթոյ․ զի Թովմայ աքուինացին ա-
սէ․ կղերիկոսք ոչ են իսկական տեարք ընչիցն
եկեղեցւոյս, այլ միայն մատակարարք և տնօրէնք ։
Նոյնպէս և Հերոնիմոս․ աղքատաց է ասէ ամ՟
զոր ինչ ունին կղերիկոսք, և վն այնորիկ հոգ-
տարցեն այնմ առաւելապէս, տալ ՚ի տասանոր-
դաց և ՚ի պտղոց որքան և կարեն՝ ՚ի պէտս հի-
ւանդաց և հիւրանոցաց ։ Դարձեալ ասէ․ յա-
ւանդութէ սբց հարցն ուսաք, զի գոյքն եկե-
ղեցւոյ են ուխտք հաւատացելոց, գինք մեղաց
և հայրենիք Թոշակք և ինչք աղքատաց ։ Նաև
կղերիկոսք՝ որք գոյիւք ծնողաց իւրեանց կա-
րեն կեալ, սրբապղծութիւ գործեն, եթէ առ-
ցեն ինչ ՚ի գոյիցն աղքատաց ։ Սբն Ամբրոսիոս
ասէ․ աղքատաց է այն ամ, զոր ունիմ ։ Նմն Գը-
րատիանոս զայս կանոն առաջի եդեալ ասէ ա-
հաւոր բանիւ ։ Եպիսկոպոս ոք՝ եթէ ՚ի փափ-
կութիս իւր և յունայն վատնողութ՟ի կեղեքել
կամեսցի զինչս եկեղեցւոյ, և կամ մերձաւո-
րաց և ազգականաց տացէ․ հարկաւ պարտաւոր
լինի դատաստանի ։ Նա դարձեալ ասէ․ եթէ
ոք այլազգ արասցէ (քան զկանոնն ասելն) զգուշ
լիցի․ մի գուցէ զպատիժ դատապարտութեն ա-
նանիայ և սափիրայի ընկալցի, պարտաւոր գը-
տեալ սբց օրինաց և կանոնաց իբրև զնոսա,
որք խորեցին զինչս աղքատաց ։

Նմն ասէ Թերևս ոք յեպիսկոպոսաց․ եթէ
ազգականքն կարօտ իցեն հարկաւոր պիտոյիցն,

ոչ

ոչ տալի է արդեօք այնպիսեացն ։ Օ՜ իշխանին այդմ կանոնք . որոց տալ պարտ է , ոչ իբրև ազգականաց , այլ իբրև աղքատաց . զի եկեղեցին շտեմարան է աղքատաց ։ Կանոնքն արդելուն , զի եպիսկոպոսք մի՛ ջանասցին հարստացուցանել զազգականս իւրեանց ընչիւք եկեղեցւոյ . և զԹոշակս աղքատաց անիրաւաբար տացեն այնցոցիկ , որք կարօղ են հնարել զապրուստըս վայելչականս ։

## Գլուխ ութևտասներորդ ։

### Թէ ցանկութիւն պատուոյ և իշխանութեան զեղծումն է եկեղեցւոյ ։

Չէ՛ք ուրեք , չէ՛ք երբէք այնպիսի վնասակար և ապականիչ բարեկարգութեան և վարուց եկեղեցականաց քան զցանկութիւն պատուոյ և իշխանութեան . և ոչինչ իր այնպէս վեր ՚ի վայր տապալէ զեկեղեցական իրացն կառավարութի , որպէս ունել զբաղձանս մեծարանաց և իշխանութեան յայնպիսի կարգաւորութեան՝ յորում որք մեծքն են և բարձրագոյնք պարտաւորին ՚ի կրտսերութեան և ՚ի սպասաւորութեան կալ կարգի , որպէս ասէ տէրն մեր յաւետարանին ։ Վասնզի եթէ բարձրութիւն աստիճանի եկեղեցական դասուց զխիրտ ոք և զհոգի խոնարհ խնդրէ ամենեւին , զի ա՛րդ հաստատուն կացցէ ՚ի բարեկենդանութեան ուղիղ և անսասանելի կարգաւորութեան , յորժամ արք փառամոլք և ամբարտաւանք պատուասիրութեան հոգւով ՚ի նոյն մերձենան . ոչ այլ ինչ ունելով դիտաւորութի , քան իշխել և փառաւորիլ , և ՚ի մարդկանէ ռաբբի անուանիլ՝ որ արդարև եղծումն է գովութեան Ս. Յ. ։

Ո՜ չարաչար սորա մնասակարութի՛ւն և ղաղականագործ աւերածութի՛ւն զհամօրէն բարեկարգութիւնս՝ բազմիցս լուեալ եմք և ընթերցեալ, և տեսանեմք իսկ հանապազ, 'ի ծայրագոյն աստիճանէ սկսեալ մինչև 'ի խոնարհ, յոր անուղղայ խորհրդով մերձեցեալ ոմանց՝ վեր 'ի վայր արարին զամենայն բարեձևութիս. յաղագս վարեցին զբովանդակ հիմունս բարելաւութե. և լցին ամ դժնդակ վատթարութե զաշխարհ ամենայն:

Հայեա՛ց յառաջին նախահայրն ամբարտաւանից, որ հպարտ պատուասիրութե յածականն ելանել պատուոյ բարձրութի ըմբռնել յանդգնեալ՝ թէպէտ և յաստուածատաստն բարկութէ արդար վրէժխնդրութե տարագրեալ յերկնից իսկոյն թօթափեցաւ, սակայն յամառութի կամաց նր 'ի նոյն խոստումն ոչ զգաստացաւ, այլ ևս քան զևս 'ի նոյն բորբոքեալ կամակորութեամբ յախտ պատուասիրութե՝ բազմացոյց զածս 'ի յերկրի ըստ իւրաքանչիւր երկիր այնոցըն ախորժակաց, և ելից զաշխարհ ապականագանծութե: Ո՛ի բազմութի ածոց բարձումն է ամ աստուածոց ըստ ասելոյ սէքն աթանասի 'ի ճառն ընդդէմ կռոց, և հիմն ապականութե վարուց և գնացից, և վերջինն ամ չարեաց:

Հպարտացան դադան և աբիրոն 'ի վր մովսէսի, և առ փառասիրութե 'ի բարձրագոյն ևս պատիւ քան յոր կոչեցեալն էին յաստուծոյ վերանալ կամեցան հոգւով ամբարտաւանութեան: Այլ տե՛ս ինձ զնորանշան կատարած նոցուն յանդգնութե. երաց երկիր զբերան, և

ըն

ընկղմեաց զամենեսին ՚ի յատակս դժոխոց ։
Պատիժն վաղաժամն կարճեաց աւասիկ զմեր
չարաչար զեղծումն , որով վարակել ունէին
զընտրեալ ժողովուրդն ըստ պարականոն խու_
րեանց գոռոզութեան ։

Սոյդ և աններելի է դատաստանն Աստուծոյ յայն_
պիսեացն վերայ , սակայն երբեմն առ ՚ի պատիժ
մեր թոյլ տայ այնպիսեացն յառաջ մատչել յաս_
տիճան ինչ հոգւով փառաւորութեան , և պատճառ
գայթագղութեան և պէսպէս անկարգութեան լինել ։
Զորոց յիրաւի է բաղձալ բարեսիրաց , և
զպօղոսին ասել գաղատ. ե. 12 ։ Երանի թէ մօ_
տակտուրք իսկ լինէին մերս խռովարարք , որ
զազատութիւն քրիստոնէական ՚ի ծառայութիւն պա_
տուաստութեան համակ չխեթայեալ՝ յամենայն անտեղիս
և յանկանոնս անխիղճ իմն մխին , միայն զի զան_
ցաւոր պատիւ ստասցին , զոր արդարև անար_
գութիւն պարտ է անուանել և ոչ պատիւ ։ Նմ_
զի ՚ի վերուստ անտի կարգեսցուք իջանել ՚ի
խոնարհ , թէպէտ և յանդգնութեան բերէ ցոյց ·
այլ սակայն և այնպէս յառաջ բերել ըստ կար_
գի զզեղծմունս ոչինչ վեհերոտիմ , զի ոչ ՚ի
նախատինս դիմէ կարգ սոյն գրութեան , այլ յա_
ւէտ իսկ ՚ի բոլորումն ճառիս և ՚ի յայտնութիւն
ճշմարտութեան , առ հասարակս ունելով բանին
զդիտաւորութիւն ։ Մանաւանդ զի զչարաչար զեղ_
ծումն բարձրագունին յեկեղեցականս , մայր
չարեաց անուանէ սուրբն Ներսէս շնորհալին , և
կարի սաստիկ և ծանր բանից կշտամբութեամբ նա_
խատէ · և էր սակս արդեօք , վասն զի յապա_
կանիլ գլխոյն՝ ապականի իսկոյն և բոլոր մար_
մին ։ Զի եթէ բարեկարգութեան շնորհացն զեղ_
մունք

մունկք նմանատիպ ահարօնեան իւղոյն յամ ան-
դամս գետահետեան, և բարեձև յարդարուն
ճոխութբ զնոսա զամենեսին հարուստ բարկա-
ւաճեն . ապա և չարաղեղծ վատթարութք ապա-
կանագործ հրոյ օրինակաւ յամ անդամս ճա-
րակեալ խանձեալ խանձատեն զամենայն կար-
գաւոր ուղղութ վայելուչ կացուն ։ Արդ՝ լսես,
զի բարձրաստիճան պատիւ է հայրապետութ և
յայն ձկտիս տենչանօք պատուոյ . փաղփիւն մար-
մընաւոր շքեղութ, բարձրութի իշխանական հը-
րամայողութն, ընդունելութ բազմազան յար-
գանաց ՚ի ստորակայից, և մանաւանդ բաղձումն
մծանալոյ յոչ օրինաւորսն՝ ձգեն զքեզ ՚ի դը-
րունս մարմնաւոր պետութեց, կամարաձև խո-
նարհեցուցանեն զքոյդ պարանոց ՚ի հաւանութ
ամենայն առաջադրութեց նոցին, ոսկեբուղխ
աղբիւրս յարդարեն զիւրաքանչիւր մատունսդ
՚ի յագուրդ նոցուն անյագութ, բարդաբարդ
տրցակս փնջեն գաւազանաց ՚ի հարուած չըն-
դունողաց, գործել տան և զանասելիս, ոչ
զի հասցես որում ըղձանաս ։ Աղ սթափեաց
՚ի պատուամոլ յիմարութէդ, և տե՛ս զինչ գոր-
ծես ։ Դժնդակ է, դժնդակ է այս ախտ ապա-
քէն, այլ սակայն և այնպէս գտանին տենչանօք
իմն հետևօղք ։ Այս է, որ բազմացոյց զաթո-
ռըն, և բազմագլուխ արար զմի ազգ . այս է՝ որ
զանազան անկարգութեց եբաց դուռն . այս ախտ
է՝ որ փակէ զբերանս գողուղի շաւղօք ՚ի նոյն
ամբարձելոց չկենիլ վրէժխնդիր օրինացն Աս-
տուծոյ ։

Լսելով լսես զասել առաքելոյն . ա . տիմ . Գ . 1 ։ Որ եպիսկոպոսութ ցանկայ, բարւոյ գոր-
ծոյ

ծոյ ցանկայ. և ոչ յառաջ մատուցանես զկարգացումն, թէ պարտ եպիսկոպոսին լինել հեզ. ցած, պարկեշտ, անարատ, հիւրասէր, ուսուցիչ, մի՛ թշնամանող, մի՛ հարկանող, այլ հանդարտ. մի՛ կռուող, մի՛ արծաթասէր, մի՛ մատաղատունկ, ևն. նոյնպէս և յարտաքնոցն իսկ վկայեալ ՚ի բարութիւն: Նա և զի՞նչ ՚ի պատուոյն միայն մոլեալ ՚ի ձախութի՝ եռանդեամբ ՚ի նոյն թեւակոխես. աղաչաւորս յարդարես, չածելով զմտաւ զծանրութիւնն պաշտաման՝ որ ովկիանոսն է հոգոց և զբաղմանց, և անդունդ իմն տարժանաւոր երկանց և աշխատութեանց, որպէս ասէ Յովհան ոսկեբերանն. բարեկարգութիւն եկեղեցւոյ և յարդարումն ժողովրդեան ՚ի բարեվայելուչ կրօնս ուղղութե, է՛ ապաքէն վախճան եպիսկոպոսութեան. համավարժութի յայնպիսիս. և անխոնջ աշխատութիւն ՚ի գործածութի անաչառապէս իւրումն պաշտաման՝ պատ՛կ է եպիսկոպոսի, զորս առանց զանցառութե ունիլ և կատարել պարտաւոր է անդժրելի ուխտիւք:

Եկեղեցին հարսն է եպիսկոպոսի, զոր թէ ոչ ըստ կանոնացն կառավարել փոյթ կալցի, և նա՛ իբրու անխնամ լքեալ, յայլանձնութիս գայցէ ՚ի ձեռն անզգոյշ կառավարչաց սատրակարգելոց. նա ինքն եպիսկոպոս տայնմա շնալ:

Լո՛ւր զի՞նչ ասէ սբն Ներսէս շնորհալին:
„Որք զառաջինն ընկալան ՚ի քէն զգործ ե-
„պիսկոպոսութե. դասք առաքելոցն, այսպէս
„արարին ինքեանք. և ուսուցին հետեւողաց
„իւրեանց նովին օրինակաւ վարիլ: Իսկ այժ-

մու

„ մու թշուառութեան ժամանակիս այնքան
„ հեռացաք 'ի բարուոյ նոցին նմանութենէ, մինչ
„ զի ոչ այլ ինչ գործոյ պատճառ գիտել զե-
„ պիսկոպոսութիւն, բայց միայն զանազան հնա-
„ րիւք ինչս ժողովել 'ի հնազանդելոց, և փա-
„ ռս որսալ 'ի փառաւորութէ, զոր անարգա-
„ նս, պարտէ ասել, և ոչ փառս։

Սոքա' են՝ ահաւասիկ, որք ոչ 'ի փառս Աստուա-
ծոյ, այլ 'ի փառս անձանց զնոյն պատիւ ստա-
նալ ջանան. և անխիղթ առնեն զքարեկարգութիւն
եկեղեցւոյ առմարմնոյ դիւրութեանն։

Լսես զճոխածաղիկ փառաւորութիւն վար-
դապետական գաւազանին, և զայնր թեկն ա-
ծես. այլ մի' պարծեսցէ զքեզ փայլիւն ար-
ժանապատուութե, և մի' յօժարեսցիս միայն
'ի շքեղութիւն անուան։

Բազմափորձ հետազօտութե քննեա' զանձն, և
ապա մատիր յաստիճանն. զի բարեպտուղ բար-
գաւաճեսցես զքոյդ գաւազան։

Ուսիր զգիտութիւն սբ ողջամիտ յստակութե. մա-
տեան Ածաշունչ կազմեա' զքո միտս, ամբա-
րեալ 'ի նմա զամենայն պատուիրանացն տեղե-
կութի։

Առաջնորդ կարգեցար հօտին քո 'ի շաւիղս
հաւատոյ. քննեա' և տեղեկացիր որոգայթաւոր
բանիցն թիւրելոց. զի մի' ընդ տգէտ առաջ-
նորդելոցն 'ի խորխորատ անկանիցիս։ Գերա-
հրաշ իմաստուն զծնօսս քո տաշտ խնկոց ա-

նս

նուանէ յերգս անդր իւրում, անաշխատ իմն
վարժեալ զանձն յորոճումն իմաստից գրոց, և
չափաւոր պարզութ̅ մատո՛ ՚ի բերան մանկանցն
եկեղեցւոյ, որով փառաւոր առնիցես զպաշ-
տօն քո: Ապա թէ միայն ՚ի պատիւ և ՚ի դիւ-
րութիւն զկամսդ ձկտեցուսցես, չարաչար խո-
տորիս. և ոչ անձին միայն՝ այլ և ամենեցուն
բերես զվնաս: Ո՜ ինչ օգուտ է կոչել ռաբբի
ռաբբի. և ունայն ՚ի պտղոցն մնալ անուան:
Ո՜ ինչ շահ մատուսցեն քեզ զբօսանք ՚ի բու-
րաստանս, եթէ ոչ վառեսցիս անխոնջ ջանասի-
րութեամբ ՚ի կատարումն դաշինդ:

Ո[illegible] լուսաւորութ̅ մտաց արդիւնաւորեսցէ
կուտակումն բեռնաբեռն գրոց. յորժամ իբ-
րև զքարակոյտս հաւաքեալ զքև՝ ննջես ՚ի
միջի, իբրև զսիրամարգ յոսկեթել պարունա-
կս գրային փետրոց բարձրավզեալ:

Լուր, զինչ ասէ սարգիս շնորհալի զայնպիսի
վարդապետացն. „ծոյլ եմք յուսանիլ. և փոյթ
„ ՚ի վարդապետել. հեղգ առ ՚ի յընթեռնուլ.
„ և արագ առ իմաստասիրել. և ՚ի վր̅ այսոցիկ
„ պղերգունեց գիրս ժողովեմք, ոչ յընթեռ-
„ նուլ և ՚ի քննել զնս̅ ըստ տ̅ն պատուիրանի,
„ խոկալ ՚ի նս̅, և իմանալ զբանս հանճարոյ,
„ և զխրատս իմաստնոց և զառակս նց̅, այլ ա-
„ նուան սակս և մեծութ̅, ոչինչ շահեալք ՚ի
„ նոցանէ, այլ առաւել ևս դատապարտեալք.
„ վս̅ զի կամ բնաւ ոչ ընթեռնումք զնս̅, և
„ կամ եթէ ընթեռնումք, ոչինչ օգտիմք:
Այսպիսի բանս ՚ի բազում տեղիս յեղյեղէ,
վշտացեալ ընդ ծուլութիւն նց̅: Ապա որ զգօնն է

և

և երկիւղած , կամ ընաւ ոչ կամի յանձն առ-
նուլ , և կամ եթէ յանձն առցէ , ամ փութով
գուն գործէ չարատել զաստիճան իւր 'ի կո-
րուստ և 'ի գայթագղութի հօտին վճի :

Բայց ե՛կ ինձ աստանօր տեսանել զվտանգ-
չարեաց դասուց քահանայից · հա՛րց ինձ , առ
ի՞նչ յայդ աստիճան պատուոյ յօժարեցար , վս
փառաց անձի՞ն , վս որ որ անուանելոյ և բարձ-
րագահս բազմելո՞յ , վս զձե՞ռս ուղ արդեօք տա-
լոյ համբուրել փափկագոյն շրթանց · կորե՛ար ,
կորե՛ար · և դարձեալ ասեմ , կորեա՛ր խեղա-
պէս · եթէ զայդ , և զորնմանեն այդմիկ՝ պաշ-
տաման քո դիցես նպատակ : Զգո՛յշ լեր ո՛վ
դու , որ յանձն առնուլ զայդ վիճակ յօժա-
րեցար , զի զարիւն ժողովրդոցն 'ի քէն պահան-
ջէ անաչառ հովուապետն : Հայր կարգեցար ժո-
ղովրդեանն , զօրացի՛ր 'ի խնամս : բժիշկ կացու-
ցար ախտացելոցն , պարտական ես գիտել զոր-
պիսութի հիւանդութե , զկարօղութի հիւանդին
և զներգործութի դարմանացն : Նկարակերպ եդար
ած հասակի , առաւելի՛ր կազմեա զշտեմարան
մտացդ ած հոգևոր կերակրովք : Օ՝ ածկարան
գաղտնեացն յարմարեցար ած հօտին , և անձին
անգամ մի՛ հաւատասցես բանալ զայն խոկ-
մամբ : Շրջեաց հանապազ յայցելութի ոչ առ
'ի անուանդ քում դատարկութե , այլ 'ի կազ-
դուրութի տկարամտութե՝ որոց կացել ես տե-
սուչ : Խօսեա՛ անդադար ուր և երթիցես , ո՛չ
ղօղանջանս ունայնաբանութե , այլ խրատս զգօ-
նութե : Ու 'ի փրկութի հոգւոյ կենդանեաց և
մեռելոց · զքո պատարագես , զգո՛յշ ամենայնիւ
լեցիս յայնցանէ , որք ո՛չ վայել են այնր բարձ-
րութե

րութ. և սաստկապահանջ խնամս պարտս վարկջիր զնմ՝ զոր կարգեալ են նախահարք ՚ի մատակարարութի նր։ Ոչ ապատէ զքեզ ՚ի դատապարտութէ կոչումն տէրտէրական. այլ առաւել ևս պարտաւոր է. վասն զի մարդոյն, որոյ անուանն մեծ իցէ քան զգործն, ասացեալ է։ Ընթերցիր զվարըս ընտիր քահանայից, և ըստ այնմ յարդարեա զքեզ. որպէս զի լիցի քեզ զերծանիլ յանվերջ պատժոյն խստագունից, որ պահեալ է քեզ։

Ամ՝ որք զփորձ առին ծանրագոյն վշտաց ընդեկեղեցականացն պատուով պարունակելոց. Թէպէտ սրք և անստգտանելիք, սակայն տե՛ս զինչ ասեն։ Սբն Յովհան ոսկեբերան ասէ։ Ո՟ն ինչ զարմացեալ՝ մտայոյզ լինիմ ՚ի սրտի, թէ կարիցէ՛ առաջնորդ ոք կամ կառավարիչ արդեօք հասանիլ փրկութե. տեսանեմ անդրէն տակաւին զոմանս. զի յօժարութ դիմեն առ այնքան ծանր և դժուարին կառավարութի, և ՚ի խորս անզերծ դատապարտութե զանձինս դահավիժեն։

Եւ սբն Գրիգոր ածաբանն. ոչ ոք ասէ յիմաստնոց ուրախութ և զուարթ սրտիւ եպիսկոպոս լինել յանկայ. եթէ զմտաւ ածեալ խորհեսցի զայն ամ վտանգս և զտանջանս՝ որ ընդ առաջ ելանեն նմա։ Աս այնորիկ յիմար է համարել զնա, որ մինչ ընդ յարթայատակ ճանապարհ գընալ կարօղ է, ՚ի բազմավտանգ և յանձուկ տեղիս անվերջ տուժանօք զինքն ածել մուծանէ։

## Յաղագս ընթերա-ընթեանց որ հանդիպին ՚ի ժամատուցման աղօթից պատարագին :

### Գլուխ ը̅ :

Խորհուրդ սոսկալի սբ̅ պատարագին ըստ ամենաբարձր իւր գերակայութեան զամենայնիւ ըղ կատարեալ լինի. պահանջէ ունել ամբողջութի̅ յա̅մ կողմանէ . վա̅ն այնորիկ հարկաւոր են մատակարարքն ամենազգաստ արթնութե̅ փոյթ յանձին ունել, զի մի թերութի̅ ինչ կամ արատ պակասաւորութե̅ զմաքրագործ շնորհս նր̅ նուազեցուսցէ, կամ խափանեսցէ : Ա̅ զի յանհոգութե̅ տարտամ պաշտօնէից այսմ խորհրդոյ բազմապատիկ պակասութիւնք հանդիպին . որոց ոմանք են և յառաջ գան ՚ի կողմանէ նիւթոյն . ոմանք ՚ի կողմանէ տեսական բանին և դիտաւորութե̅ մատուցողին, և ոմանք ՚ի կողմանէ կատարիչ պաշտօնէին : Յորոց եթէ մի ինչ պակասեսցի, անկատար մնայ խորհուրդ պատարագին : Բայց ՚ի լինել այսոցիկ էութենականաց, թէ և այլք ոմանք պակասեսցին՝ գոյ անդանօր ճշմարտութի̅ խորհրդոյ, և իսկապէս կատարի . զի այնպիսիք ՚ի զարդ և ՚ի յարգութի̅ սահմանեալ են սբ̅յ պատարագին . և չեն էականք : Այսու թէպէտ և ոչ լինին խափանարարք կատարման, սակայն լինին ՚ի յանձանս անզգոյշ պատարագողաց, կամ ՚ի գայթագղութի̅ ժողովրդեան . որպէս ունիս տեսանել ՚ի յաջորդ պրակն : Յաղագս որոյ նա̅խ աչալուրջ մտօք և արթուն խորհրդով պարտէ հայել այնմ և նախահոգալ, որ հանդերձեալն է զքս̅ պատարագել . զի մի՛ լինիցի նմա ընաւ զանց առնել

զինչ

զիմ͞ն թէ 'ի մեծամեծաց, և թէ 'ի փոքունց․ որք կարգեալ են յամբողջ կատարելութի, կամ 'ի շուք և պատիւ սր͞բոյ պատարագին ։

Ուր եթէ 'ի սուերական պատարագսն հին օրինաց զայնպիսի և զայնքան զգուշաւորութի փութոյ և երկիւղած յարգման խնդրէր ա͞ծ 'ի քահանայից, մինչև զատուսկման մահու պատիժ սպառնալ զանցառուացն զեւէք 'ի պատուիրանացն, քանի՞ առաւել ապա ընդ պատժաւոր դատապարտութի՞ն ոչ անկանիցին նորայս սրբազան խորհրդոցն քահանայք, որք զգուշանալ հեղգանան 'ի մատուցման ահաւոր խորհրդոյ պատարագին, որ փրկութի՞ն է համօրէն աշխարհի և թողութի մեղաց ամենեցուն, (որք արժանապէս 'ի նոյն մերձենան,) և թոյլ ատնթերութե ինչ անկանիլ յամենասուրբն յայն մատակարարութիւն ։

Գլուխ Է ։

Յաղագս Նշխրոյ պատարագին և պաշտօնատարութեանցն ։

Սրբութ մատուցման սր͞բ պատարագին ըստ կացուցման տեառն մերոյ յիսուսի ք͞ի՝ է հաց 'ի ցորենոյ անխմոր, և գինի յորթոյ անապակ ։ Վ͞ս զի զայնոսիկ էառ անդր 'ի վերնատան 'ի սր͞բ յա͞ծային և արարչագործ 'ի ձեռս իւր, և ա͞ծային բանիւն յիսկական մարմին և յարիւն իւր փոխեալ ըստ գոյացութեանն՝ 'ի ճաշակումն մատոյց ընտրեալ իւր աշակերտացն․ և պատուիրեաց իսկ զնոյն առնել հանապազ առ իւր յիշատակ ։ Վ͞ս այնորիկ ըստ ամենայնի հարկաւոր

կա՛ւոր է և պարտ ամ քրիստոնէից այնու նիւ-թով կատարել, որով զառաջինն մատուցանի ին-քըն ամենատէրն մեր, և որ այլապէս իմն. քան զնոյն արասցէ, կամ խափանէ զխորհուրդն, կամ անպատուէ զայն ՚ի դատապարտութիւն ան-ձին իւրոյ։

Ուստի և հարկաւորէ առանց ինչ անօրինման. զի հաց սբ պատարագին յստակ ՚ի ցորենոյ լի-ցի և անխմոր. զի հանապազօր ՚ի զատիկ մեր զենա-նի քն անարիւն նուիրմամբ։ Եւ զնոյն հացն ու-րական միայն քահանայքն պատրաստել պարտին ըստ կանոնացն հրամանի, և ոչ երբէք աշխարհա-կանք. և այն՝ զկարգեալ կանոնս աղօթիցն կա-տարելով. նա և ոչ օթեկան ջրովն զանգել զըդ-խմորն. և զնոյն ինքն զնշխարն խաչաձև դրոշ-մեալ, և լաւագոյն իմն. զգուշութ. եփեալ, ջեր-մաջերմ հանել ՚ի սեղան, ըստ կանոնի սբ ա-ռաքելոցն և սբյն Գրիգորի մեր Լուսաւորչի։

Բայց պակասաւորէ, եթէ ոչ իցէ հաց ՚ի ցո-րենոյ. այլ կամ ՚ի հաճարոյ, կամ ՚ի գարւոյ, և կամ ՚ի կորեկոյ, և այլն։ Եւ կամ թէպէտ և ՚ի ցորենոյ իցէ, սակայն այնքան ընդ խառ-նեալ ընդ այլ սերմանեաց, մինչև չմնալ ՚ի նը-մա ցորենականութեան, և ոչ ևս կարել հաց ՚ի ցորենոյ անուանել։ Նմանապէս և՝ եթէ այլով ինչ կերպիւ իցէ ապականեալ, որպէս թէ՝ զանգեալ իւղով, կամ ընդ մեղր. և այլն։ Եւ կամ չիցէ եփեալ ՚ի հուր պատշաճապէս, այլ՝ յարևու չորացուցեալ՝ և այլն։ Ո ի այսպիսիք ամենեքեան, և որք ՚ի սոցին նմանի, են խա-փանարար պակասութիւնք սբյ պատարագին.

և

և չկատարէ խորհուրդն այսպիսի նիւթով. և որ յանդգնի, ընդ նզովիւք կանոնաց է իսկապէս։

Այս և՝ եթէ ալիւր նշխարին չթրեսցի տաքրական ջրով, այլ արուեստահնար ինչ հեղուկօք, որպէս՝ վարդեջրով և ն. թէպէտ աւանդութի լատին եկեղեցւոյ ընդ երկբայութե թողու զկատարումն կամ զոչ կատարումն. բայց յաւանդութեան մերս եկեղեցւոյ չէք երբէք տեսեալ կամ լուեալ զայնպիսի մտածութի. ուստի ընդ անընդունական է համակարգել:

Իսկ և հաց խմորուն ըստ կացուցման քո ոչ համարի պատշաճաւոր նիւթ սբյ պատարագին, այլ՝ միայն բաղարջ. և չէ՛ պարտ երբէք հայոց խմորեալ հացիւ պատարագել. ապա թէ ոչ՝ ի կանոնական նզովս գրաւեալ՝ արտաքս անկանի ՚ի հաղորդութենէ եկեղեցւոյ. որպէս և վճռի յութերորդ կանոն Յովհաննու իմաստասիրի և ժողովոյն կարնոյ: Նա չէ փոյթ՝ թէ այլ եկեղեցիք կատարեն. զի մեք ՚ի սկզբանէ և այսր ուսեալ եմք անխմոր պատարագել: Արդեն պարտիմք մնալ հաստատուն ՚ի նախնի մեր աւանդութի. և զայլոցն և ս մի՛ անգոսնել. ոչ համարելով իսկապէս մարմին և արիւն քի զխմորուն հացիւ զմատուցեալն առ ՚ի նոցանէ. զի նոցա է տալ պատասխանի, որք նորաձևեցեն զնախկին կացութիւնն զինչ և իցէ պատճառաւ:

Ո այսուիկ գիտելով՝ պարտէ ապա ժամարարին յառաջագոյն նկատել, զի մի պակասութի ինչ գացի ՚ի հացն նուիրական, և այնպէս անխիղճ մատու-

մատուցանել զնոր պատարագն ։ Ուստի եթէ կայցէ պակասութի ինչ 'ի նշխարն, և ինքն ապա իմացաւ. որ եթէ յառաջ քան զառաջին աղօթքըն իմասցի, որ է՝ տէր ած մեր, զայնպիսի պակասութի, որ արգելու 'ի նիւթն գոլոյ, պարտի իսկոյն փոխել զայն. և զանարատն դնել. սկսանելով 'ի բանէ անտի, որ ասէ. յիշատակ տեառն մերոյ յսի քսի եւն ։

Իսկ եթէ 'ի ժամ բաշխելոյն իմացաւ, խափանեսցէ զպատարագն ։ Սակայն եթէ 'ի մկրտելն իմացաւ, և պակասութին իսկ չիցէ յամենեւին խափանարարացն, զորօրինակ՝ թէպէտ և անարատ իցէ նշխարն, սակայն իմանայ, թէ մուկն տարածեալ իցէ 'ի վր, և այլ այսպիսիք՝ կատարեսցէ զպատարագն. և ապա երեք շաբաթ կարգ կրեսցէ. որպէս ասեն կանոնքն ։ Նոյն սակայն եթէ իմացաւ և անփոյթ արար. երրուառ ոչինչ համարելով՝ տարի մի ամբողջ ապաշխարեսցէ ։ Ըստ այսմ և էական նիւթ է սբյ պատարագին գինի անապակ 'ի բերոյ որթոյ ամենեւին անխառն ընդ ջրոյ. որպէս աւանդութի սբ եկեղեցւոյն մերոյ 'ի սբյ լուսաւորչէ մերմէ և այսր. զոր և սբ առաքեալն Թադէոս աւանդէ՝ յեօթներորդ կանոնին իւրում. ընդ նմա և սբն մակար 'ի խնդրոյ սբյն վրթանէսի, կանոն. ր. յովհան իմաստասէր՝ կանոն. ը. և ժողովն կարնոյ՝ կանոն. ը ։ Զորոյ զճշմարտութին նորուն իսկ տեառն մերոյ բանք ուխտին ցուցանեն. ոչ ըմպել 'ի բերոյ որթոյ, (յետ վերջին այն ընթրեաց 'ի վերնատան անդր,) յորոյ վերայ ասէ նա ինքն սուրբ հայրապետն յովհան ոսկեբերանն. թէ որթն գինի բերէ և ոչ ջուր.

Ապա

Ապա պակասաւորէ, եթէ ամենեւին ՚ի քացախ իցէ փոխարկեալ, և կամ խառնութ̃ ջրոյ ապականեալ, և կամ թէ հացիւ կամ այլ նիւթով պղտորեալ, և յետոյ պարզեալ. զի այսպիսի գինեաւ ոչ կատարի խորհուրդն։ Ասւի և չէ՛ պարտ ուրեք յանդգնիլ բնաւ, և զմատուցումն փրկաւէտ խորհրդոյն ՚ի դերեւս հանել. ապա թէ ոչ՝ ամենայնիւ ընդ նզովիւք անկանի։

Բայց սակայն եթէ գինին նոր իցէ սկսեալ քացախիլ, կամ սակաւ ինչ թթուահամ իցէ, կամ նոր ՚ի խաղողոյ մզեալ. ևն. թէպէտ և կատարի խորհուրդն, սակայն ծանր մեղանչէ կատարիչն յաղագս անհոգացող լինելոյ՝ զքարի և զկրօնաւորական յարգութիւն առ ահաւոր խորհուրդն ոչ ցուցանելով։

Արդ եթէ ճապաղեսցի խորհուրդն յորժամ հանէր ՚ի սեղանն. եթէ նախքան զառաջին աղօթքն պատահեսցի, որ է՝ ո̃ր ա̃ծ մեր. և հարկ ՚ի վ̃ր կայ. կատարեսցէ զպատարագն. և ապա երեք օր ընդ կարգու կացցէ. սակայն եթէ յետ աղօթիցն ճապաղեսցի, մի՛ մատուսցէ. այլ լոկ ճաշակեսցէ, և քսաներեք օր կարգ ածցէ։ Իսկ եթէ յանդգնիցի մատուցանել, զտարի մի պահօք և աղօթիւք ապաշխարեսցէ քաւել զմեղս իւր, որպէս և կանոնն է շնորհալին։

Բայց և զայս իսկ պա՛րտէ գիտել, զի այսոքիկ նիւթք՝ հաց և գինի պարտին ներգործութ̃ առաջի քահանային լինել՝ և նա ինքն ժամարար անթարթափ զգաստութ̃ մտաց զդիտաւորութին իւր յատկապէս ՚ի նոսա ուղղել պարտաւո՛րէ

մինչև

մինչև ցաւարտումն պատարագին, ո՛չ զի երկիւղած կրօնաւորութ՟ կատարեալ զնոյն՝ բարեյաջող ճոխութե՟ կենդանեաց · և յաւէժական հանգստեան յուսով ննջեցելոցն լիցի երաշխաւոր, և մեծամեծ բարեաց համօրէն աշխարհի պատճառ և մատակարար ։

Այլ և ըստ կանոնացն արգելման չէ պարտ նմա յաւարտման սր՟ պատարագին լուանալ գինեաւ զմատունս իւր 'ի սկիհն, և ոչ թաշկինակաւ մաքրել զսկիհն · այլ միայն մատամբք իւրով ջերմեռանդ սրբել և հոգւով ըստ աւանդութ՟ սր՟ եկեղեցւոյ մերոյ ։

## Գլուխ Երրորդ ։

### Յաղագս տեսական բանից սուրբ պատարագին և պաշտամունեան նորա ։

Տեսական բանք կատարիչք բարձրագոյն խորհրդոյ սր՟ պատարագին՝ են այնոքիկ, զոր ասաց նոյն ինքն տէր մեր յս՟ քս՟ յորժամ 'ի յընթրիս վերնատան զհացն և զգինին իսկական մարմին և արիւն իւր արար ։ Այլ անդանօր առեալ զհացն յա՟ծային ձեռս իւր՝ ասաց, Առէ՛ք կերէ՛ք, ա՛յս է մարմին իմ, ևն՟ ։ Նոյնպէս և զգինին առեալ ասաց, Արբէ՛ք 'ի սմանէ ամենեքեան, զի ա՛յս է արիւն իմ, ևն՟ ։ Ապա այսոքիկ են տեսական բանքն, որովք կատարի խորհուրդ սր՟ հաղորդութե՟ ։ Զորս պարտաւոր է սրբագործօղ քահանայն լի՝ և անթերի արտասանել առանց աւելման և նուազութե՟, որոշ 'ի վր՟ հացին և որոշ 'ի վերայ գինւոյն, իւրաքանչիւ-

րում զխուրն խօսելով հանդերձ անշփոթ դի-
տաւորութ միայն առ նոյն: Քանզի թէպէտ և
ըմպանութ խորհրդոյն և նշանակացն ՚ի հոգե-
ւոր և յանմահարար կերակուր փոխարկութին կա-
տարի յասել քահանային՝ որով զհացս ևն.
սակայն որովհետեւ տեսական պատճառ կատա-
րեչ խորհրդոյ պատարագին ըստ ամենայն ազ-
գացն Ածուբանից են նոյն իսկ բանքն քի, զոր
՚ի վերոյ եդաք, յաշտաբերութ նոցին ճշմար-
տապէս և կատարեալ փոխարկումն լինի գոյա-
ցութեան հացին ՚ի մարմին քի., և գինւոյն՝
յարիւն խնկական: Եւ կայ այնուհետեւ նոյն
ինքն քս ըստ կատարեալ միաւորութե ածային
և մարդկային բնութեցն ՚ի ներքոյ տեսակաց
հացին և գինւոյն: Եւ այս իսկ է պատճառն,
զի քահանայն զոյգ ընդ ասելոյն զբանս զայսո-
սիկ՝ բարձրացուցանէ զընծայսն ՚ի տես և յեր-
կրպագութ ամենեցուն հաւատով և ոգւ սր-
տիւ ներկայ եղելոցն: Այլ սակայն և զայս ես
յաւել ածել ՚ի դէպ է, զի կատարիչն խորհրդոյս
քահանայ զբանսն զայնոսիկ ըս երկու միացն ևս
ասել նկատէ, մի՝ պատմաբար, ըստ որում ըն-
կալեալ ՚ի վերուստ անտի զկատարումն խոր-
հրդոյ տնօրէնութեն քի առաջի առնէ, առ հայր
խօսելով, և տարեալ աւարտէ մինչև ՚ի միա-
անգամ գալուստն: Եւ երկրորդ՝ տեսականբար
ըստ որում նա ինքն մաքրագործ պատարագիչ
զդէմս քի զգեցեալ անդանօր, և զդիտաւո-
րութի միայն իւրոյ հաստատութ առ նոյն իսկ
՚ի նշանակսն ուղղիղ ձկտեցուցեալ յատակ և
մաքուր ջերմեռանդութ ասէ զբանսն, զի իս-
կապէս գոյափոխեսցին նշանակքն ՚ի մարմին և
յարիւն քի. և առանց երկբայութե հաւատայ՝
թէ

թէ խոկ և խոկ կատարեցաւ խորհուրդն աստաւոր մարմնոյ և արեան տն մերոյ յի քի:

Անդրիմադրելի է այս ճշմարտութի, և ոչ ոքընդդէմ ինչ ասել կարող է, բայց քանզի որպէս 'ի մարմնաւորին անօրէնութեն քի խոկապէս մարմին եղեալ էր բանն ած. և անդստին խոկ 'ի ծննդենէ 'ի հրաշս փառաց աստուածաբար իմն բարձրացեալ, սակայն և 'ի մկրտութե անդր ընկալաւ անօրինապէս զհոգին սբ, որ եկն աղաւնակերպ և հանգեաւ 'ի վերայ նր. և նոյն տէր՝ որ խոկութն է համայն փառաց և փառաւորութեանց, նորին գործակցութ 'ի գործ սքանչելեացն փառաւորեցաւ: Նոյնպէս և աստանօր ընդ ասել քահանայքն մաքուր դիտաւորութ: Այս է մարմին իմ, այս է արիւն իմ. թէպէտ և խոկոյն կատարի ճշմարտապէս փոխարկութն. և աստուածապէս մարմին և արիւն քի լինին նշանակքն: Բայց սակայն՝ որպէս զի և ներգործութի սրբութե հոգւոյն ընկերեսցէ 'ի կատարութն խորհրդոյս, և գործն նր յայտնի երևեալ ծանուսցի յայսմ խորհրդեան, անդրէն երկրորդօրհնութն աղաչէ քահանայն զհայր առաքել զհոգին սբ յընծայսն, ըստ որում և առաջին մարդեղութն խոկ հաճութ հօր և գործակցութ հոգւոյն սբյ եղև: Իւ այսպէս՝ որ յառաջն խոկապէս 'ի մարմին և յարիւն քրիստոսի գոյափոխեալ էր, ճշմարտապէս հոգևոր կերակուր լինի հոգւոյն սրբով ամենայն արժանաւորաց, և զօրանայ 'ի հրաշս զարմանալեաց, միաւորելով զմարդիկ ընդ այ. և շնորհօք ածս և որդիս Այ առնելով զարժանապէս ճաշակօղսն՝ ընդնովին և զայլ ես բազմապատիկ հրաշս գործե-

լով

լով. զորս շնորհել մաղթէ ՚ի Հօրէ ՚ի յաջորդ աղօթս մր̃ կենդանեաց և ննջեցելոց:

Մ.յլ ասիցէ ոք թերևս, եթէ յասել քահանային զտեառնական բանն՝ ստուգապէս ՚ի մարմին և յարիւն տեառն դարձուցանելն նշանակքըն, զի՞արդ ապա համարձակի խնդրել, յորժամ զորով օրհնեալն ասէ:

Պատասխանեմ, վասն զի ներգործութի Հոգւոյն սր̃յ խաչին յայտնեցաւ, և սր̃ եկեղեցին ՚ի ձեռն խաչին եղև բազմապատիկ շնորհացն որբին արժանաւոր, որով և նոյն ինքն Հոգին անուանի պարգև սր̃ խաչին. ըստ այնմ՝ յոհան. է 39: Ոչ՛ էր Հոգի, քանզի յս̃ չև՛ էր փառաւորեալ՝ այսինքն խաչեալ: Սայնորիկ և յասելն զնոյն առ հայր, խաչակնքէ զընծայսն առ ՚ի ցուցանել զճշմարտապէս եկաւորութի հոգւոյն սր̃յ (որ խաչին շնորհեցաւ,) և զըմբռնողականապէս լրականութիւն սարսափելի խորհրդոյն յ[illegible] հրաշ ներգործութիս զարմանալեաց: Այս ինք և ՚ի դէմս իւր խաչակնքէ, զի և յինքն իսկ հաճեսցի իջանել մարդասիրութբ̃, և ընդ շնորհօք ող̃ զառաքեալսն, որով աներկբայ ճշմարտութբ̃ լիցի նմա հաւատալ զնոյն իսկական մարմին և արիւն տեառն. և առանց դատապարտութե̃ մերձենալ ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց:

Մ.րդ՝ զծայրագոյն իմն զգուշութի պարտ է քահանային բերել յանձն, յորժամ արտաբերել ունի զբանսն զայնոսիկ, զի յստակ և բացայայտ ասասցէ առանց այլայլութե̃՝ անպակաս

և

և առանց յաւելման։ Քանզի եթէ դիպեսցի նմա թողուլ զիմն յեղականացն տեսակին՝ որք են, այս է մարմին իմ, այս է արիւն իմ, ոչ կատարի խորհուրդն. վն զի տեսակաւորիչ խորհրդոյն են նոքին, և այնպէս ունայնանայ շնորհք սբյ պատարագին ՚ի դատապարտութի ինքեան։ Նոյնպէս եթէ այլայլեսցէ զձևն, նուազեցուցել ինչ ՚ի հարկաւորաց, կամ փոփոխեալ ըստ նշանակութե բառիցն զիմն յեղական եղերաց, ոչ կատարի։ Սակայն եթէ յաւելուցու ինչ ի հաստատակ բանին, որք միայն ըստ հրամանի են, և յառաւել բացայայտութի մասց տեսական բանին, թէպէտ և կատարի խորհուրդն՝ բայց ինքն մեծապէս եւս մեղանչէ։ Աստի ասեն ածաբանք, թէ յորժամ հաստատի իմանայ ժամարարն՝ թէ թողեալ իցէ կամ մոռացեալ ինչ յեղական հարկաւորացն, իսկոյն կրկնեսցէ գոնեայ լռելեայն թէ ուք, բայց եթէ հաւատի գիտասցէ՝ թէ մոռացեալն կամ թողեալն չէ ՚ի հարկաւորացն առ կատարումն խորհրդոյն

ոչ է պարտ կրկնել։

## Գլուխ Երրորդ։

### Յաղագս պահանջմանէ կատարիչ պաշտօնէին։

Պաշտօնեայ կատարիչ ածային խորհրդոյս է ճշմարիտ և օրինաւոր քահանայ, որում չէ պարտ լինել անգործունեայ և տարտամ ՚ի դիտաւորութե, ոչ անզեղջ շաղախեալ ՚ի մեղս մահացուս, ոչ լինել բանադրեալ կամ արգելեալ, որով արժանապէս կարասցէ մատուցանել զսբ պատարագն։ Աստի և ՚ի հինգ կողմանէ

նէ համդիպիլ կարէ այս պակասութի, այսինքն՝ ՚ի դիտաւորութեն, ՚ի տրամադրութե հոգւոյ, ՚ի յորպիսութէ մարմնոյ, յանպատշաճութե ըղ-ձեստուց, և ՚ի մատակարարութէ խորհրդոյն՝ զոր կատարէ:

Պակասութիւն դիտաւորութե է, յորժամ ը-խաղ կամ յապպանել կատարեսցէ· որով թէ-պէտ և խորհուրդն ոչ կատարի, սակայն և ին-քըն իսկ ՚ի պատիժ քահանայիցն է անտարա-կոյս, որք անդոսնէին զսէրն ՚ի խաչին և սաէ-ին, վա՛հ, որ քակէիր զտաճարն, ևն: Նոյնպէս և անկատար է դիտաւորութին, յորժամ վա-րանոտ և տարտամ միտք զբաղեալ՝ մտօքն ՚ի սեղանն, և ոչ նկատէ ներգործական դիտաւո-րութե ՚ի նոյն ինքն ՚ի հացն և ՚ի գինին, զոր սրբագործէ· այլ իբրու սովորական ինչ գործ համարելով կատարէ միայն զօրութենական դիտմամբ: Նա և՝ յորժամ չունի փոյթ որո-շելոյ, թէ՛ որպէս զպատարագն՝ զոր մատուցա-նէ նախկնաբար նուիրել պարտ իցէ հօր ՚ի յանուն քի, և զի՛ արդ ապա զշնորհս արդեանց նր տարածանել առ սպասաւորս և ՚ի գործա-կիցսն սր պատարագին մատուցման, և թէ որպէս պատշաճաւոր է զշնորհ սր պատարա-գին ընդարձակել առանց, յորոյ անուն մա-տուցանի· և եւ առ ուխտաւորս և առ պտղա-բերիչս սր եկեղեցւոյ, առ կենդանիս և առ ննջեցեալս, ևն: Նաև զի թէպէտ և ՚ի լինել զօրութենական դիտաւորութե առ այսպիսի՝ իբրու թէ նկատելով առնել, զոր առնէ եկե-ղեցի, կատարի խորհուրդն· բայց սակայն առ-անբասիր և անստգտանելի ազատութե ՚ի խղճա-

հարու

հարութենէ լուսագոյն ևս է, զի առ ամենեսին յընդունական պտղոյս մեր պատարագինն երգործական և որոշ դիտաւորութ՟բ հաղորդեսցէ զշնորհաց արդիւնս ։

Աւաղ վայ է մեզ և բիւրիցս վայ, որք ՚ի սարսափելի յայս խորհուրդ իբրու ՚ի սովորական ինչ գործ մատչիմք, բերանք մեր ա՟ծաբան, և ձեռք մեր ա՟ծագործ, բայց սակայն սիրտ մեր Թափառական, և միտք մեր ընդունայնախոհ, հոգի մեր անպտուղ, և կամք մեր առանց եռանդեան․ ոտիւք ՚ի սեղան անդր կանգնեալ, և խորհրդով յունայն մտածութիւս համօրէն ցնդեալ ։ Եւ այսպէս փոխանակ հաշտեցուցանելոյ զա՟ծ ընդ մարդկան, ՚ի պատճառս այսպիսեաց ՚ի ցասումն բարկութե՟ զամենաողորմ բարերար բնութիւն բերեալ ։

Զայս առ՚ցես ինձ և զանպարծութ՟ ՚ի փող փող փայլմունս ոսկեթել զգեստուց, և զաչացն ագահութ՟ յախորժականս երկրաւորաց, զցամաքեռանդն բարբառումն աղօթական բանից, և զառանց ուշադրութ՟ շտապումն, նմանապէս աննշան հնչմանն պղնձոյ և ծնծղայից ըստ առաքելոյն ։ Այսոքիկ ամենեքեան տոյժ տագնապի են հոգւոց՝ ե՛ղբարք, և մեք ՚ի նոսին ախորժանօք իմն շրջանակիմք առանց զգաստութեան ։

Պակասաւորութիւն յառաջ եկեալ ՚ի տրամադրութ՟ հոգւոյ է, յորժամ պատարագիչ քահանայն լիցի բանադրեալ՝ կամ ՚ի կարգէ լուծեալ, և կամ այլ զինչ և իցէ կերպիւ ըստ կանոնացն

նոնացն արգելեալ, զի չկարէ այնպիսին լինել պաշտօնեայ խորհրդոյ. և եթէ յանդգնեսցի' պատժեսցի խսպառ անկանելով յեկեղեցւոյ 'ի բաց, որպէս ասէ կդ̃. կանոն առաքելոց. և դ̃. կանոն անտիոքայ ժողովոյն: Այլ խորհուրդըն' զոր մատակարարէ, կատարի ըստ ասելոյ ոմանց, իսկ որքան մ̃ս յանարժանս հաղորդելոյն, նոյնքան և վասն 'ի գործ դնելոյ զպաշտօնն, որ արգելեալ էր ինքեան' ծանրագոյն և մեղանչէ: Նոյնպէս և ծանունս մեղանչէ, որ ունի զխոստովանահարս և 'ի մահացու մեղս մնալով պատարագէ, կամ թէպէտ և չունի զխոստովանահարս, սակայն 'ի հարկաւորութե̃ պատարագէ առանց զղջանալոյ: Բայց սակայն' եթէ զղջասցի 'ի բոլոր սրտէ և առաջադրեսցէ որքան և կարելին է, վաղվաղակի խոստովանիլ, ոչ այնքան ծանր մեղանչէ: Առ այսմ և եթէ 'ի մատուցման անդր 'ի միտս բերցէ լինել ինքեան 'ի մեղս ինչ մահացու, յամենայն սրտէ զղջացեալ առաջադրեսցէ ստուգութե̃ ին̃ խոստովանիլ և ապաշխարել ըստ արժանւոյն: Նմանապէս և յորժամ իմանայ զինքն արգելեալ կամ բանադրեալ, իսկոյն պարտի հաստատուն զղջմամբ ապաշաւել, և ջերմեռանդ սրտիւ առաջադրել ինքեան զընդունելութի̃ արձակման: Յոքիկ թէպէտ և այսպէս, սակայն յորժամ չկայ վտանգ ինչ գայթակղութեան լաւ և առնէ յառաջ քան զսըրբագործութի̃ն' թողուլ զպատարագն և ոչ կատարել:

Պակասութի̃ն առաջ եկել յորպիսութե̃ մարմնոյ է, յորժամ պատարագիչն չէ ծոմ յետ ընթրեաց

րեաց երեկոյին և անդր՝ կամ որոշակագոյն՝ յետ ասելոյ զեկեսցեն, այլ կերեալ է ինչ կամ՝ արբեալ զջուրս և այս՝ որով պատճառաւ և իցէ, մինչ նա և իբրև զդեղ ինչ կամ զըմպելի բժշկական, որքան և փոքր իցեն ըստ քանակութեան, զի արգելուն կանոնք զայնպիսին՝ ՚ի պատարագելոյ և ՚ի հաղորդութենէ։ Նա եթէ նախքան զգիշերն առցէ կերակուր կամ ըմպելի, թէպէտ, և յետոյ ննջեսցէ, և կերակուրն ևս լաւապէս չէ մարսեալ՝ ոչ մեղանչէ։ Բայց վասն շըփոթման մտացն՝ որով բառնի ջերմեռանդութիւնն, զգուշացուցանեն յետս կալ ՚ի պատարագելոյ և ՚ի հաղորդելոյ։ Այնպէս ևս՝ եթէ կցին ճաշորդք կերակրոյ յատամունս ոչ արգելուն. զի ոչ կլանին իբրև զկերակուր, այլ իբրև զթուք։ Նոյն է իմանալ, յորժամ ՚ի լուանալ զբերանն՝ կայլակ ինչ ջրոյ կցի առանց դիտաւորութեան։ Եթէ երազական հոսումն պատահեսցի, պատճառեալ ՚ի յառաջագոյն իմն մտածութենէ, որ իցէ մեղք մահացու, և կամ ՚ի պեղխելոյ ՚ի կերակուր և յըմպելի, արգելանի մերձենալ ՚ի խորհուրդն սբ. բայց եթէ այլապէս ինչ թուեսցի խոստովանահօրն։ Իսկ եթէ յերկբայութեան է, թէ արդեօք նախընթաց մտածութիւն մահացու էր՝ թէ ներելի, դարձեալ հրամայի յետս կալ ՚ի պատարագելոյ, սակայն ըստ դիպուածոյ հարկաւորութեան. ևն։ Բայց եթէ հաւաստի է չլինիլ մահացու մեղաց ՚ի յառաջընթաց իւր մտածութենէն, այլ միայն բնական պատճառաւ թուլութեան ՚ի քնոյ, կամ դիւական խաբէութեամբ իցէ պատահել, և պատճառաւ շարժութեան մարմնոյ չիցէ հանդիպեալ այնպիսի վրդովումն մտաց, որով անկար լիցի արգե֊

լումն

լուծն, յայնմ աւուր սրբեալ զինքն հառաչանօք և աղօթիւք՝ հաղորդեսցի կամ պատարագեսցէ և ո՛չ զրկեսցի ՚ի շնորհացն, որպէս և կանոնագրեն սբ̅ հարքն։

Թէ յարարողուէ̃ անդր պատարագին, և թէ ՚ի զգեստս հանդերձիլ կարեն բազում պակասութիւնք, յորոց զոմանս գրեսցուք աստանօր։ Արդ՝ նախ չէ կարելի մատուցումն պատարագի արտաքոյ սբ̅ եկեղեցւոյ և ոչ ՚ի յեկեղեցի՝ որ ոչ օծեալ իցէ, և չունիցի զբեմ և զօծեալ վէմ, զի արդարև հերքի այլ ըստ օ՛րինի, որ արտաքոյ սբ̅ եկեղեցւոյ մատուցանէ զսուրբ պատարագն ըստ սբ̅յն գրիգորի նարեկացւոյն։ Թէպէտ և առ հարկաւորութէ երբեմն տնօրինի որոշել տեղի մի, և անդ ՚ի վերայ օծեալ վիմի հրամայի յեպիսկոպոսէն մատուցանել, որպէս տեսեալ եմք ՚ի բազում տեղիս, և որպէս երբեմն ժողովք տնօրինեցին ՚ի ներքոյ խորանի ՚ի վերայ շարժական սեղանոյ պատարագել յաւուրս զաքարիայ սպասալարին, ուր երգեցաւ զառաջինն և խորհուրդ խորին երգ զգեստաւորման։ Նոյնպէս և պակասաւո՛ր է, եթէ սեղանն չիցէ ծածկեալ մաքուր պաստառաւ և գործուրայիւ։ Եթէ չիցեն մոմք ՚ի լուսաւորութիւն։ Եթէ ժամանակն չէ յարմարաւոր. որ է յառաւօտէ մինչև ՚ի կէս օր. բայց յաւուրց շաբաթու ճրագալուցի ծննդեան և զատկի։ Եթէ պատարագիչն չէ կատարեալ զգիշերային պաշտամունս և զառանձնական աղօթսն և ըզսաղմոսերգութիւն։ Եթէ քահանայական ըզգեստքն չեն օրհնեալք։ Եթէ չկայցէ դպիր կամ սպասաւոր։ Եթէ ոչ գոյ պատշաճաւոր

սկիհ

սկիհ հանդերձ մաղզմայիւ, որոյ սկաւառակ կամ աւազան պարտի լինել կամ յոսկւոյ կամ յարծաթոյ և կամ յանագէ, այլ ոչ ՚ի պղնձոյ կամ յապակւոյ և կամ ՚ի փայտէ: Զի պղինձըն ժանկահամ է և ապակին դիւրաբեկ. իսկ փայտն յինքն ծծէ զհեղուքս: Եթէ մարմակալքն կամ գործուածքն չիցեն մաքուր և յաննկար կտաւոյ, և օրհնեալք յեպիսկոպոսէ, կամ յայլմէ ումեքէ, որ ունի զիշխանութի օրհնելոյ: Եթէ պատարագեսցէ զգլուխն ծածկել ունելով առանց անօրէնութեան վս հարկաւոր պատճառի: Եթէ չկայցէ խորհրդատետր առաջի ժամարարին, թէպէտ և սերտ ՚ի բերան գիտասցէ զամենայն աղօթսն են:

Գոն և այլ բազումք, որք հանդիպիլ կարեն ՚ի մատակարարութեան խորհրդոյն, որոց տեղեկութին կարևոր է ժամարարաց, որպիսի են հետագայքն: Եթէ ՚ի պատարագել քահանային ահ հասցէ ՚ի թշնամեաց, և ինքն սկիզբն արարեալ էր մէջ խորհրդոյն՝ թողուլ պարտ է զպատարագն և փախչիլ, և ոչ անկանիլ ՚ի ձեռըս թշնամեաց, որ ոչ համարի նահատակութ, բայց զբաժակն արբցէ, և զմն հացն ընդ իւր բարձէ, և զայլ մն սպասս և որքան կարէ ազատեսցէ: Եթէ ՚ի խորհուրդն մազ կամ ճանճ և կամ այլ ինչ նման՝ անկցի, զորս առանց նողկտանաց և վտանգի փսխելոյ չկարէ ըմպել, հանցէ զգուշութ, և ՚ի ծերպս եկեղեցւոյ դիցէ. իսկ եթէ չկայ վտանգ զզուանաց՝ արբցէ ընդ խորհրդոյն: Եթէ ՚ի մն յարենէն ՚ի վերայ հանդերձից սեղանոյն կաթեսցի, մաքրել պարտ է զգուշութբ. այլ թէ ՚ի հանդերձս իւր՝ կտրել.

րել և 'ի ծերպս եկեղեցւոյ պահել։ Իսկ եթէ
'ի գետին կամ 'ի վր̄ տախտակի լինիցի կաթիլ
քհ̄ բուկնին քերել պ՛րտէ զայն և ծածկել ը̄
սեղանով։ Եթէ պատճառաւ ինչ փոխեսցէ ժա-
մարարն, և տեսանէ հաղորդութեան ամբողջ
երևեսցին 'ի նմա, մեծարանօք առցէ զտեսակ-
քն և ճաշակեսցէ, եթէ հնար իցէ. բայց չկա-
րէ առ նողկանաց. զգուշութեամբ հաւաքես-
ցին, և տեղին լաւագոյն եւս քերեսցի, և պա-
հեսցին ամենեքին թաղեալք 'ի ներքոյ սեղա-
նոյն։ Եթէ ցամաք մասն խորհրդոյն 'ի վերայ
ծածկոցին անկցի չէ ինչ. բայց եթէ յերկիր,
պատուով և յարգանօք 'ի վեր առցի, և տե-
ղին քերեալ՝ ընդ սեղանով ծածկեսցի քե-
րածն։ Կարեն և այլ այսպիսի բազում պակա-
սութիւնք հանդիպել 'ի մատակարարութեան՝
զորոց ուղղութիւն ըստ կանոնացն առ-
նել պ՛րտ է, և ոչ թողուլ անապաշխարհ ըզ-
քահանայն, որ ոչ զգուշացաւ և եբեր զթերու-
թիւն յամենակատար յայն խորհուրդ։ Այլ
աղաչեսցուք զտէր տալ մեզ զգաստութիւն
մտաց և հոգւոյ, զի արժանապէս սպասահար-
կեալ սրբազան պատարագին և այլոց եւս սրբ
բազան խորհրդոյն եկեղեցւոյ՝ մատակարարք
շնորհացն հանդիսասցուք արժանաւորաց, և
վայելեալ 'ի նմին բարւոք պաշտամամբ՝ կրկ-
նակի պատուոյ լիցուք ժառանգաւոր 'ի քս̄ յս̄
'ի տէր մեր. որում փառք և երկրպագութի
ծնրադրութեամբ բարեբանութիւն ընդ հօր
և ը̄ հոգւոյն սբ̄յ այժմ և միշտ և յաւիտեանս։

Սա աղերսեցութիւն հեղինակին տեառնց ինչ յաւելման:

Ահա՛, ո՛վ թշուառական քահանայ՝ որ մեռեալ ես յերկինս և կենդանի կեաս 'ի դժոխս, և զնոյն ինքն զսատանայ 'ի քումդ սրտի զետեղեալ մատչիլ ժպրհիս 'ի սեղան տեառն՝ պղծել զսրբութիւն նորա, և այպանել զանուն նորա սբ, բերանով օրհնես և սրտիւ անիծանես: Ո՛ բանսն խորհրդոյն պղծալից շղթամբք արտաբերեալ՝ յամենաբարի փրկչին քո յերես թքանես: Ո մեծ վայելչութիւն նորին՝ զոր ցանկան հրեշտակք դիտել ընդ աղօտ տեսանել և ամենայն երկնային զօրացն դասակցութիւնք անլռելի ձայնիւ վերագոչեն սբ, սբ, սբ, դու ամբարշտութեամբ ծանակեալ հայհոյես, յորժամ սրտիւ լռես, և բերանով իբրև զշուն ղօղանջեալ գոչես, տէ՛ր՝ չեմ բաւական, թէ ընդ յարկաւ իմով մտցես, այլ ասա՝ բանիւ և բժշկեսցի հոգի իմ: Ո ամենասբ մարմինն զայն՝ որ 'ի մաքրագոյն անդր արգանդի երջանիկ կուսին յղացաւ 'ի հոգւոյն սրբոյ՝ յանմաքուր բերան քո եդեալ՝ և որ գինն է բոլոր աշխարհի՝ թունաւոր ատամամբք խածատեալ՝ ծամքեալ կլանիս և յապաւառարանն հոգւոյդ զտիղմ գռեհաց ձգես: Վասն զի չէ դու զնաքեայ ինչ պղծագործութիւն յաղտեղամած բերան քան 'ի տղմի թաղել զորդին այ· զհայր քո և զարարիչ, զստեղծիչ քո զկեցուցիչ և զգինն փրկութեան քո: Ո՛վ չարագոյն քան զյուդայ, և վատթարագոյն քան ըզհրէայս, զարհուրին դևք, սարսափին դժոխք այն ինչ ժպրհիս դու անարժան ճաշակել զմարմին և զարիւն տեառն, որ թէ ոչ սատակեսցիս

իբրև

իբրև զ յուդայ զնի սրբապիղծ գ ճաշակման, մեծագոյն ես տանջանաց և խստագոյն ես պատժոց պահիս։ Ու թէ ոչ դարձցիս և զղջասցիս, գտանձես քեզ բարկութիւն յաւուր բարկութեան և յայտնութեան արդար դատաւորին այ, որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց։ Քանզի այնքան խիստ և անաչառ լիցի քեզ դատաստանն յայն աւուր սոսկալի, որքան ես առաւել համբեր քեզ նախ քան զայն։

Ծանի՛ր ապա զվիճակ քո մաքրագոյն, թէ յո՛րպիսի պատիւ ճոխացար, զի զոր կոյսն երանեալ ամենասուրբ մայրն Մարիամ միանգամ և եթ ծնաւ, դու ինքն քանիցս անգամ և պատարագես, բանիւ զնոյն կատարես, իբրև ի սեղանոյ վայելես, և տն մերոյ յի քի մարմնովն և արեամբ կերակրես։ Ո՛վ երջանիկն քահանայութէ, ո՛վ սրբութեան ձեռաց, ո՛վ օրհնեալն լեզուի, ո՛վ սրբազանն կրծոց և երանել որովայնի. եթէ յայսմ առաւօտու այնուիկ մաքրութ մարմնոյ՝ սրտի և մտացն ընկալցիս զմարմին քո, որպէս արժանն է, միւս ես մարիամ լինիս արդարև, որոյ արգանդն դրախտ եղև որդւոյն Այ և սրբարար հոգւոյն Սրբոյ։

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ …
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳԱՅՍՈՒԹՅԱՆ … ԲԻБЛИОТЕКА
Ин-та Истории и Литературы

Ցանկ գլխոց՝ պարունակելոց յայսմ գրքուկի ։


| | երես | |
|---|---|---|
| Ընծայաբերութիւն ։ | 3էն | ց4 |
| Յաղագս պատուոյ քահանից ։ | 7 | 8 |
| Գլուխ Ա ։ Թէ արքայական է քահանայական պատիւ ։ | 8 | 10 |
| Գլուխ Բ ։ Թէ քահանայք գերիվերոյ են քան զմարդիկ. և են հրեշտակք ։ | 10 | 15 |
| Գլուխ Գ ։ Թէ քահանայք են սիրելիք և բարեկամք Այ ։ | 15 | 18 |
| Գլուխ Դ ։ Թէ քահանայք են Ածք ։ | 18 | 21 |
| Գլուխ Ե ։ Հաստատութիւն քահանայական գերազանցութեան բանիւք սրբոց հարց ։ | 21 | 24 |
| Գլուխ Զ ։ զարմանաւոր միաւորութիւն քի ընդ քահանային ՚ի սբ հաղորդութեան ։ | 24 | 25 |
| Գլուխ Է ։ Թէ որքան ճշտիւ համար պահանջեսցի ՚ի քահանայից յաւուրն դատաստանի ։ | 26 | 31 |
| Գլուխ Ը ։ Թէ որքան կատարելութիւն և սրբութիւն պահանջի ունել քահանային ։ | 31 | 35 |
| Գլուխ Թ ։ Թէ յանցանք քահանայից ծանրագոյնս վշտացուցանեն զԱծ ։ | 35 | 40 |
| Գլուխ Ժ ։ Թէ զիա՞րդ անաչառ պատժէ Ած զքհնայս վս մեղաց ։ | 40 | 47 |
| Գլուխ ԺԱ ։ Թէ որքան պարտաւորութիւն է քահանայից օրինակ բարեաց լինել ժողովրդեանն ։ | 47 | 50 |
| Գլուխ ԺԲ ։ Թէ որքան հարկաւոր է քահանայից ունել զգիտութիւն ։ | 50 | 53 |
| Գլուխ ԺԳ ։ որքան զազրալի է անմաքուր պղծութիւն ՚ի քհնայս ։ | 53 | 58 |


Գլուխ

Գլուխ ԺԴ։ Թէ պարտ է քահանայից պահել զողջախոհութիւն օրինակաւ քրմաց։ 58 60
Գլուխ ԺԵ։ Թէ պարտ է քահանայից հրաժարել յաշխարհական զբաղմանց և յամենայնում պարապել։ 60 65
Գլուխ ԺԶ։ Թէ պարտաւորեն քահանայք խորշել յունելոյ զինչս։ 63 67
Գլուխ ԺԷ։ Թէ զինչ պարտաւորութիւն է ունողաց զեկեղեցական հասոյթս։ 67 74
Գլուխ ԺԸ։ Թէ ցանկութիւն պատուոյ և իշխանութեան՝ զեղծումն է եկեղեցականաց։ 74 83
Պրակ Ա։ յաղագս թերութեանց որք հանդիպին՝ ի մատուցման սրբոյ պատարագին։ 83 84
Պրակ Բ։ յաղագս նիւթոյ պատարագին և պակասութեանց նորա։ 84 89
Պրակ Գ։ յաղագս տեսական բանի սրբոյ պատարագին և պակասութեան նորա։ 89 93
Պրակ Դ։ յաղագս պակասութեան կատարիչ պաշտօնէին։ 93 100
Նա ազդեցութիւն հեղինակին առանց ինչ յաւելման։ 101 102

ԱՒԱՐՏ։

[illegible]

ՊԱՀՊԱՆԵԼ Է 1971 Թ.